


647

ՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. ԱԲՐՈՀԱՄՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻՇ
ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԱԼԵՈԳՐԱՖԻԱՅԻ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՄԱՐՈԿՉՈՒԹՅՈՒՆ

ԹԵՐԵՎԱՆ

1940

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

23 MAY 2005

Դր. Գոյքին 408

ԱԶ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

003
Q-16

**ՀԱՄԱՌԱԾ ՈՒԽՎԱԳԻԾ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱԼԵՈԳՐԱՓԻԱՅԻ**

Դաստիարակություն՝ կարդացված Յերևանի
պետական համալսարանի պատմական
ֆակուլտետի V մասնագիտական կուրսում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պալեոգրաֆիա բառը—հունարեն և և նշանակում է հնագրություն (πολαιός=հին և γράφω=գրում եմ): Առարկայի նպատակն ե ուսումնասիրել՝ գրության առաջացումը, ձևափոխումը, տարածումը, ինչպես և այն ամենը, ինչ վոր կապվում և նշված հարցերի հետ—գրելու նյութը, գրելու ժամանակը, ձեռագրի գրիչները, և այլն: Հայկական պալեոգրաֆիայի ներկա համառոտ կուրսը նպատակ ե դնում ծանոթացնել հայկական գրության առաջացման, ձևափոխման և տարածման հետ: Նա սովորեցնում ե նաև թե ինչպես պիտի վորոշել ուսումնասիրության յենթակա տեքստի ժամանակն ու վավերականությունը:

Հայկական պալեոգրաֆիայի նշանակությունը հայ ժողովրդի պատմության և գրականության համար բավականաչափ մեծ է: Նա համարվում ե հայ ժողովրդի պատմության և գրականության ոժանդակ կարևոր դիսցիպլինաներից մեկը: Հին և միջնադարյան հայոց պատմությամբ և գրականությամբ զբաղվող մասնագետներն իրենց ուսումնասիրության սկզբնադրյուրներն, ինչպես հայտնի յե, ձեռագիր և վիւճակիր տեքստերն են դարձնում: Հայկական պալեոգրաֆիայի հիմնական որենքներին անծանթ անձնավորությունը, պարզ ե, վոր չի կարող ոգտվել այդ բնագրերից:

Պալեոգրաֆիայի նշանակությունը հայ ժողովրդի պատմության և գրականության ուսումնասիրության ասպարեզում մեծ ե նաև մի այլ հարցում:—Մեզ հասած հայկական գրչագիր և վիւճագիր տեքստերի զգալի մասը չունեն թվականներ: Դրոդ, ընդությնակող և փորագրող անձինք հաճախ չեն գրում թվականը կամ գրում են, բայց հետագայում թվական պարունակող այդ մասը փշանում, կորչում ե: Պալեոգրաֆիան և գարձյալ, վոր մեզ ոգնության և գալիս՝ վորոշելու տվյալ տեքստի մոտավոր ժամանակը:



Յեվ, վերջապես, մեղ հասած գրչագիր և վիմագիր տեքստեացում հաճախ պատահում են գրության ժամանակի անձառությունները: Յերբեմն, որինակ՝ կեղծում են ձեռագրի գրելու ժամանակը: Կամ պատահում ե՝ ուշ շրջանում ընդորինակող գրիչներն արտադրում են նախագաղաքար որինակի հիշատակարանը նախկին ժամանակով, վորը և պատճառ և դառնում վորոշ շփոթությունների: Այս բոլոր դեպքում պալեոգրաֆիան մեզ սովորեցնում ե ճիշտ ձևով մոտենալ ուսումնասիրության յենթակա տեքստին և ճիշտ ձևով վորոշել նրա ժամանակը և վավերականությունը:

Հայկական պալեոգրաֆիայի շարադրված ամբողջական կուրս մինչև այժմ, դժբախտաբար, գոյություն չունի: Սակայն նրա թեմաներից մեծ մասը, վորոշ դեպքում շատ մանրամասը, մշակված և մեր մատենագրության մեջ:

Գրչության արվեստին վերաբերող առանձին հոդվածների մենք հանդիպում ենք գեռաս Մովսես Քերթողին, Դավիթ Անհաղթին և Ստեփանոս Սյունեցուն վերագրվող Դիոնիսիոս Թրակիացու քերականության մեկնությունների մեջ: Նման հատվածներ կան նաև՝ Համամ Արեվելցու (IX դ.), Գրիգոր Մագիստրոսի (XI դ.), Հովհաննես Յերզնկացու (XIII դ.), Վարդանի (XIII դ.) և այլ հեղինակների կազմած քերականությունների կամ քերականության մեկնությունների մեջ:

Միջին դարերում առանձին հայ մատենագրեր կազմել կամ մեկնել են հայկական գրչության ամբողջական կուրսեր: Այդպիսի հայ հեղինակներից կարելի յե հիշել՝ Արիստակես Գրչին (XIII դ.), վորի աշխատությունը վերնագրված ե. «Վերլուծութիւնք բացերեալիս բազմազան բառից և բայից յոզնախումբ շարադրությամբ արարեալ զսա Առիստակէսի գրչի ի խնդրոյ բազմացյարհեատէգրչութեան» (տես մեր մատենադարանի թիվ 3917 ձեռագիրը), Գրվորդ Սկեվուեցուն կամ Լամբրոնացուն (XIII դ.), վորի աշխատությունը վերնագրված ե. «Խրատք գրչութեան, զոր արարեալ է Գէորգ վարդապետ՝ ի խնդրոյ Ստեփանոսի մականուն Գոյներիցանց կայթառանցւոյ» (տես մեր մատենադարանի թիվ 267 ձեռագիրը) և Գրիգոր Տաթեացուն (XV դ.), վորի աշխատության վերնագիրն ե «Գրիգոր Տաթեացոյ լուծումն գժուարիմացքանցն ի գիրս գրչութեան Արիստակէսի և Գէորգայ Լամբրոնացույց» (տես մեր մատենադարանի թիվ 7117 ձեռագիրը):

Հիմք կա յենթագրելու, վոր հայկական գրչության արվեստի վորոշ կուրսեր դասավանդվել են միջնադարյան հայոց դըպ-

րոցներում: Մեր մատենադարանի մի գրչագիր (XIV դարի), վորը պարունակում ե Գեվորգի և Արիստակեսի կազմած գրչության արվեստի կուրսերը, ունի հետեւյալ հիշատակարանը. «Զի որպէս անհնարէ թուչնոց ի լուծ լծել և ակօս պատառել և կամ եղանց յօդս վերանալ, նոյնպես առանց աշխատելոյ ի սմա ոչ ոք կարէ հասու լինել արուեստին մեծի գրչութեան և որ յանդզնի համարձակիլ՝ ոչ կարէ գրել ճշմարիտն, այլ զեղծանէ զարուեստն և աղաւաղէ գրելին ըստ անիմաստ խոհակիրի, այսինքն՝ մասգրծի, որ ոչ գիտէ զորոշումն յօդուածին, այլ անհմտաբար հանէ գանգամ այն միսն ի միւս անդամն և զմիւսոյն ի միւս» (տես թիվ 237 ձեռագիրը, Ստեփաննոս գրչի հիշատակարանը):

Հայկական պալեոգրաֆիային վերաբերող առանձին հարցեր և թեմաներ ժամանակակից գիտական պահանջների համաձայն ակսվել ե մշակվել XIX դ. յերկրորդ կեսում: 1892 թ. Իսահակ Հարությունյանը մշակել ե հայոց նշանագրերի ստեղծման և հայկական գրության տեսակների վերաբերյալ իր արժեքավոր աշխատությունը «Հայոց գիրը» վերնագրով: 1898 թ. Վիեննայի միաբանության անդամ Հակոբոս Տաշյանը՝ յեվրոպացի գիտնական Շուխարդի (H. Schuchardt) հայկական պալեոգրաֆիայի վորոշ հարցերի նկատմամբ արված հարցումների կապակցությամբ, մշակել և հրատարակել ե իր արժեքավոր աշխատությունը «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ» վերնագրով՝ ծանրանալով հայկական պալեոգրաֆիայի մի շարք հարցերի վրա—գրության տեսակների, նրանց գործադրված ժամանակի, կրկնագրերի, բառատրոհության, կետագրության և այլն: Հայկական պալեոգրաֆիայի մշակման ասպարեզում անգնահատելի աշխատանք ե կատարել պրոֆ. Զ. Աճառյանը: Նա իր մի շարք հոդվածներում, վորոնք լույս են տեսել «Հանդէս ամսօրիայ»-ում, մանրամասը մշակել ե հայկական գրության նախնական տեսակները, ծածկագրությունը, «իմաստնոց նշանագիր»-ը և պալեոգրաֆիային վերաբերող բազմաթիվ այլ հարցեր: Հայկական պալեոգրաֆիայի համար արժեքավոր աշխատություններ են հանդիսանում՝ Մարկվարտի «Պատմություն հայերեն նշանագրերու» ուսումնասիրությունը, վերջերս Արմֆանի Պատմության և Արիստոգիբայի ինստիտուտի հրատարակած՝ ընկ. կ. Ղաֆադարյանի «Հայկական գրի սկզբնական տեսակները» աշխատությունը և բազմաթիվ այլ աշխատություններ, վորոնք մեծ չափով ոգնել են մեզ պալեոգրաֆիայի ներկա համառոտ կուրսի կազմման ժամանակ:

Պալեոգրաֆիայի մեջ մտնում են հետեւյալ 15 թեմաները՝

- 1) Նախամեսրոպյան գրի ու գրականության հարցը,
- 2) Հայկական գրության հնագույն նմուշները,
- 3) Հայ գրիչները,
- 4) Հայկական գրերի տեսակավորումը,
- 5) Յեղիկաթագիրը և նրա բնորոշ հատկանիշները,
- 6) Բոլորգիրը,
- 7) Նոր գիրը և շղագիրը,
- 8) Համառոտագրությունները,
- 9) Գաղափարագրերը,
- 10) Ծածկագրության հիմնական տեսակները,
- 11) Թվերի գործածությունը հայկական գրականության մեջ,
- 12) Կետագրությունը,
- 13) Մանրանկարչությունը,
- 14) Տեքստերում կատարված աղավաղումները և փոփոխությունները,
- 15) Զեռագրերի սիդնատուրայի լրացումը:

Պալեոգրաֆիայի կուրսի մեջ մտնող մի շարք թեմաներ մենք բաց ենք թողնում, վորովհետև նրանք այնքան մանրամասն են մշակված, վոր այժմ մեր խորհրդային համալսարաններում առանձին ոժանդակ կուրսեր են դառնել: Այդ թեմաներից են՝ նույնիկամատիկան (վորն ուսումնասիրում և հնագույն գրամմաների և մեծական գրությունները), սիրտագիտիկան (վորն ուսումնասիրում և դաշտագիտագիտագիտիկան կամ կոմիտագիտագիտիկան գրությունները), դիվանագույնիկան (վորն ուսումնասիրում և հին կոնդակների, ակտերի և այլ վավերագրերի գրությունները) և եպիգրաֆիկան (վորն ուսումնասիրում և վիճագիրագրությունները):

1. ՆԱԽԱՄԵՍՐՈՊՅԱՆ ԳՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Հայ ժողովրդի կուլտուրայի և գրականության պատմության մութ և վիճելի հարցերից մեկը՝ նախամեսրոպյան գրի և գրականության գոյության հարցն եւ Խոսքն այսուեղ սեպագիր գրության մասին չեւ, վորը, ինչպես հայտնի յեւ, զործ են ածել գրության մասին չեւ, վորը, ինչպես հայտնի յեւ, զործ են ածել Հայաստանի նախարանիկները և վորով գրված մոտ 110 արձանագրություններ են հասել մեզ, այլ մեր ներկա հայերեն գրությանը գրություններ են հասել մեզ, այլ մեր ներկա հայերեն գրությանը նախորդող գրի ու գրականության: Հայագետ գիտնականներն այդ գրության վերաբերյալ հայտնել են իրարից բավականին տարբեր կարծիքներ:

Մինչև XIX դ. յերկրորդ կեսը նախամեսրոպյան գրի և գրականության գոյության փաստն ընդհանրապես ժխտվել եւ Գերիշխող եւ հանդիսացել այն տեսակետը, վոր նախ քան Մեսրոպը հայկական գիր ու գրականություն չի յեղել, Մեսրոպն եր, վոր առաջին անգամ ստեղծեց հայկական նշանագրերը (բացառությամբ յերկուսի, վորոնք հետագայում ավելացվեցին): Մեր պատմագրության մեջ այդ տեսակետի հիմնադիր կարելի յեւ համարել Չամչյանին: Նա իր «Հայոց պատմութեան» առաջին հատորում գրել եւ «Յայտ է առ ամենսեին, թէ զնշանագիրս հայոց՝ զոր վարեմք, եղիտ սուրբն Մեսրոպ ընդ ամենայն՝ երեսուն և վեց տառք՝ յայրէն մինչև ի քէ, ի բաց առեալ զօն և զՓէն, որք ի յետին ժամանակս առեալ եղին յայլոց ազգաց» (Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հատ. I, եջ 755):

Հայկական գրչության վերաբերյալ գերիշխող այդ տեսակետն առաջին անգամ քննադատության և յենթարկվել ինձիձյանի կողմից: Նա իր «Հնախօսութեան» մեջ փորձել է ապացուցել վոր Վուամշապուհ հայոց թագավորի հրամանով Դանիելի մոտից Հայաստան բերված գրերը վոհչ թե Դանիելի կողմից եյին ստեղծված, այլ հին հայկական գործածական գրերն եյին, վորոնք պահպել եյին նրա մոտ: «Դանիելի կան զիրս... ոչ եթե Դանիելի է յօրինեալ, այլ առ նմին Դանիելի պահեալը էին հայկական նշանագրերը...» (Ղ. Ինձիձեան, Հնախօսութիւն I, եջ 73):

Նախամեսրոպյան նշանագրերի գոյության հարցն ավելի համարձակ դնում է պլոտի. Ք. Պատկանյանը: Նրա համոզմամբ «...ավելի ճիշտ ե այն կարծիքը, վորի համեմատ Մեսրոպը վոչ թե գտավ հայոց այրուբենը, այլ արդեն յեղած, բայց ընդհանուրից չգործադրված Դանիելյան հայկական այրուբենը կատարելագործեց» (Պրօֆ. Պատկանօ, տես նրա թարգմանած „Իշտորիա Մօվսես Կագանկաւաց“ ծանոթագրությունները, եջ 326):

Նման վճռական յեղրակացությունների յեն հանգել նաև յեվրոպացի հայագետներ Հյուբշմանը, Պետերմանը և ակադ. Բրոսսան: Այսպես, Պետերմանը նախամեսրոպյան նշանագրերի մտական հետկայալն ե գրում: «Հայոց տառերի գյոււրը վերագրում են Մեսրոպին, սակայն նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր նա վոհչ թե ամբողջ այրուբենն ե գրել կամ կազմել, այլ մի հին, վաղուց մոտացված այրուբենը վերականգնել, կատարելագործել և տարածել ե ամբողջ յերկրում» (H. Petermann, Real-Encyklopädie für protestantische Theologie. I, եջ 666):

Ակադեմիկոս Բըրոսսին վհչ միայն համոզված ե յեղել նախամեսւ-
բոպյան շրջանում հայկական նշանագրերի գոյության հարցում,
այլև փորձել ե վորոշել նրանց քանակը. «Հայոց հին այբուբենը
բաղկացած եր 22 տարից, վորի վրա Մեսրոպն ավելացրեց 14
տառ, այդպիսով կազմվեց նոր այբուբենն ըստ հունական շարա-
հարության» (Brosset, Deux Historiens Arméniens Kirakos de
Ganzac, 13-րդ ժանութությունը):

Նախամեսրոպյան հայկական գրականության գոյության
հարցն ամենից ավելի համարձակ դրել ե ակադեմիկոս Վ. Բըրու-
սովը: Նա ոռուսերեն լեզվով իր կազմած „Լետուսի исторических
судеб армянского народа“ աշխատության մեջ մանրա-
մասը քննելով այն բոլոր փաստերը, վորոնք վկայում են հոգուտ
հայկական գրականության նախամեսրոպյան շրջանում գոյու-
թյան, յեկել ե հետեւյալ վճռական յեզրակացության: «Առաջին
չորս դարերի ընթացքում հայկական գրերի մի մասը շարա-
դրված ե յեղել այլ լեզվի այբուբենով, իսկ մյուս մասը՝ Դանի-
ելյան գրերով» (Վ. Բրյոսօվ, Լետուսի... եջ 47-48):

Հոգուտ նախամեսրոպյան հայ գրականության գոյության ե
արտահայտվել նաև հայագիտության խոշոր ու հեղինակավոր դեմ-
քերից մեկը—Ն. Յ. Մառը: Նա իր նշանավոր «Ահի» աշխատության
առաջաբանում, քննելով Անդրկովկասի կուլտուրայի պատմու-
թյան մի շարք հարցեր հայկական գրականության վերաբերյալ,
յեկել ե հետեւյալ յեզրակացության: «Վողջ Կովկասը, ներառյալ
նաև Հայաստանը, կուլտուրական են յեղել դեռևս ասորա-
բարելական քաղաքակրթության եպոխայում: Հայաստանում մայ-
սինի լեզվով գրականություն գոյություն ուներ մեր թվագրու-
թյունից դեռևս մի քանի դար առաջ» (Խ. Յ. Մարը, Ահի, 1934,
շտր. 5):

Հայկական գրականությունը նախ քան Մեսրոպը և ընդհան-
րապես քրիստոնեությունից առաջ գոյություն ունենալու հար-
ցը գնող գիտնականները նշում են հետեւյալ փաստերը՝

ա) Մեսրոպյան գրությանը նախորդող շրջանից մեզ հասել են
մի շարք հայ մատենագիրների աշխատությունները (Փալսոս,
Ագաթանգեղոս (ինարկե վոչ մեզ հասած խմբագրությամբ) և
ուրիշները, վորոնք, հավանական ե, գրել են հայերեն, բայց այլ
նշանագրերով:

բ) Վ դարից առաջ Հայաստանում գոյություն ուներ կադ-
մակերպված պետականություն: Այդքան հին պետականություն

ունեցող յնրկրում չեր կարող գոյություն չունենալ տեղական
լեզվով գրականություն: Այդ անհրաժեշտ եր հատկապես ներքին
հարաբերության համար:

գ) Հին հայ պատմիչները հիշում են առանձին հայ թագա-
լիքների քարտուղարների: Այդպիսի քարտուղարներից մեկն եր
Ագաթանգեղոսը Տրդատ մեծի պալատում: Այդ քարտուղարները,
հավանական ե, գրում եյին վհչ միայն հունարեն և ասորերեն,
այլև տեղական լեզվով:

դ) Վ դարից առաջ, ըստ Խորենացու և Փալսոսի տեղեկու-
թյունների, Հայաստանում գոյություն ե ունեցել զատավարու-
թյուն (Փալսոս, IV, 12, Խորենացի, III, 51): Այդ զատավա-
րությունը, հավանական ե, վարվել ե տեղական լեզվով:

է) Հեթանոսական Հայաստանում գտնվում եյին մեծ թվով
մեհյաններ, ուր քուրմերը ժամապաշտություն եյին կատա-
րում: Դժվար թե այդ ժամապաշտությունը կատարվեր այլ լեզ-
վով: Հավանական ե, նրանք ունեյին տեղական լեզվով գրված ծի-
ակատարության մատյաններ, և վհչ թե ամեն ինչ քուրմերը գի-
տեյին անդիր ձևով:

զ) Խորենացին վկայում ե, վոր պարս Շապուհ թագավորի
հրամանով նրա զորավարներից Մերուժանը մտել ե Հայաստան,
այրել ե ձեռքն ընկած գրքերը և արգելել ե հունարենից գըր-
քերի թարգմանությունը («Եւ զորս մի ուսանել զգալութիւն յունարէն, այլ
զգարսիկ, և մի ոք իշխանցէ յոյն խօսել կամ թարգմանել այս-
պիսի ինչ պատճառաւ, զի ամեննեին մի լիցի Հայոց ընդ յունաց
ծանօթութիւն»—Խորենացի, III, 36): Յեթե Շապուհի ժամանակ
Հայաստանում գոյություն ե ունեցել թարգմանություն՝ պարզ
ե, վոր գոյություն ե ունեցել նաև հայ գրություն:

է) Վ դարից մեզ հասած կանոնական-կրոնական և փիլի-
սոփայական թարգմանական գրականությունն աչքի յի ընկ-
նում իր ճշտությամբ և հարուստ վոճակ: Աստվածաշունչի
թարգմանությունն, որինակ, ըստ մի շարք յեկրոպացի գիտ-
նականների վկայության, հանդիսանում ե բոլոր թարգմա-
նությունների թագուհին: Այդպիսի ճշտությամբ և գրական հա-
րուստ վոճակ թարգմանությունը հնարավոր եր միայն այն ժո-
ղովրդի մոտ, վորն ուներ գրական հարուստ լեզու և թարգմա-
նական վորոշ արագիցիա:

ը) Հեթանոսական շրջանում Հայաստանում պաշտվել ե մի

աստված, վորի անունը՝ յեղել և Տիր (այդ նույն անունից և տիրացու): Սա համարվել է արվեստի և գրականության աստվածը: Մի ժողովուրդ, վոր ունեցել է գրականության և արվեստի աստված, նա ունեցել է նաև գրականություն:

թ) Յեզ, վերջապես, Փիլիստրատուը (հույն հեղինակ, վորն ապրել է III դ. առաջին համարում) Ապագողոնիոս Տիւանցւոյ վարչի մեջ բերում է մի զրույց այն մասին, վոր Տավրոսում մի վագր և բունվել վզին մի մանյակ և մանյակի վրա հայերեն գրած «Թագաւոր Արշակ Նիւսեայ» (էպէցրառու Արմենօս որաբիւս Բատիւս Արտօհիս թեփ Նուսի - II, 2 տպ. C. L. Kayser, հատ. I, եջ 44): Վագրի զրույցը կարող է առասպել լինել բայց վոր III դարի հեղինակը ծանոթ պիտի յեղած լինի հայերեն գրության գոյության փաստի հետ-դա կասկածից գուրս ե:

Նախամեսորապյան շրջանում հայ գրի ու գրականության գոյությունը չնդունող ազբյուրագետները մատնացույց են անում հետեւյալ փաստերը՝

ա) Կան մատենագրական պարզ վկայություններ նախամեսորապյան գրականության բացակայության: Այսպես, Կորյունի մոտ կարդում ենք. «Զի ոչ էր գիր հայերէն լեզուին՝ բազում պակասութիւն լինէր ճշմարտութեան աւանդիցն առ աշակերտեալն»—Կորյուն, եջ 16):

թ) Հունարեն լեզով են գրված Հայաստանի մեջ գտնվող հայ թագավորների հին արձանագրությունները: Այդպիսի արձանագրություններից ե՝ Տրդատ հայոց թագավորի արձանագրությունը Բաշ-Արարանում (տես Ռոստովցև «Ապարանская греческая надпись царя Тирдата»), Արմավիրի արձանագրությունը՝ գրված Սելեվկյան շրջանում, Սերեսոսի տեղեկությունը թե՝ «Ղըրուշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինդ թագաւորացն Հայոց և պարթեաց յունարէն դպրութեամբ» և այլն:

գ) Արշակոնի թագավորների մեջ հասած դրամները հունարեն գրով են կտրած (տես Sammlung Petrowicz, Arsaciden-Münzen, Wien 1904, s. 183—191, Tafel XXV):

Մեր կարծիքով ավելի հավանական է յերեւմ առաջին գիտնականների յենթագրությունները, վորովնետև նախամեսորապյան գրականության գոյությունը չնդունող գիտնականների բերած փաստարկումները վերաբերում են հայկական նշանագրերի բացակայության և պաշտօնական շրջաններում հունարեն գրության գործածության: Հայկական վորոշ պատմիչներ, յերեւմ ե, վոր

նրանք աշխատում են հայկական գիրն ու գրականությունը, ինչպես և վողջ հայկական կուլտուրան, կապել քրիստոնեության հետ: Յեթե նախամեսորապյան շրջանում յեղել է հայկական գրականություն, իսկ մեզ թվում ե, վոր հարցի նման գրվածքը ճիշտ է, ապա պիտի յենթագրել, վոր քրիստոնեական կրոնը, յերբ ճանաչվեց վորպես պաշտօնական կրոն Հայաստանում, վհչ միայն քանդեց և վոչնչացրեց մեհյանները, այլև վոչնչացրեց նրանց ստեղծած վողջ գրականությունը:

Հայկական ներկա գրությունը կապվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ: Ժամանակակից պատմիչները (Կորյուն, Ղազար Փարպեցի և Մովսես Խորենացի) մանրամասն նկարագրում են հայկական ներկա գրերի ստեղծման պատմությունը. կուլտուրական այդ խոշոր փաստը նրանք պատմում են հետեւյալ ձեռվությունը՝ Մեսրոպ Մաշտոցը դիմում է Սահակ կաթողիկոսին՝ սեփական գրեր ստեղծելու համար: Վերջինս հավանություն և տալիս Մաշտոցի ցանկությանը և յերկուսով միասին դիմում են Վուսնշապուհ հայոց թագավորին: Վուսնշապուհը հայտնում է նրանց, վոր իրեն հայտնի յե վոմն Դանիել ասորի յեպիսկոպոսի մոտ հայերեն նշանագրերունենալու փաստը: Մարդ են ուղարկում Դանիելի մոտ և բերում հայոց նշանագրերը: Պարզվում ե, վոր հայոց այբուրենը թերի յե, —պակասում են ձայնավոր տառերը: Մաշտոցը Վուսնշապուհի թագավորելու հինգերորդ տարին մի խումբ աշակերտների հետ իջնում է Յեղեսիա և Ամիդ՝ հայկական նշանագրեր ստեղծելու ցանկությամբ: Աշակերտներին թողնելով այդ քաղաքանի մոտ, Մաշտոցը յերկու հոգու հետ միասին գնում է Մովսեսի ստատացուց խորհուրդներ ստանալու համար: Այստեղ ել հենց վերջնականապես կազմվում է հայկական մեր ներկա այբուրենը: Այսպես պատմում է Կորյունը՝ բաղրում աշխատութեան համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում և պարզէր իսկ վիճակ յամենաշնորհն աստուծոյ, հայրական չափուն ծնանել ծնունդ և սքանչելիս սուրբ աջողմ իւրով նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդէն վաղվաղակի նշանակեալ անուաններ և կարգեալ յօրինէր սիւղորայիւք և կապօք և ձայնատուր նշանօք»:

Նշանագրերի այդ ստեղծումը, ըստ նորագույն ուսումնասիրությունների, տեղի յե ունեցել 407 թվին:

Մաշտոցը Մովսեսի գնում է Սամոսատ քաղաքը՝ հայ-

Հայկան տառերը գեղադրական մշակման յենթարկելու համար: «Եւ ապա,—շարունակում ե Կորյունը,—հրաժարեալ եպիսկոպոսացն սրբոց հանդերձ օդնականօք իւրովք իջաներ ի քաղաքն Սամսոստայ, յորում մեծապատիւ իսկ եպիսկոպոսէն և եկեղեցւոյն մեծարեալ լինէր: Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հոռովինոս անուն գտեալ, որ զամենայն ընտրութիւնս նշանագրոցն զնրագոյնսն զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանդամայն յօրինեալ և յանկուցեալ¹:

Կորյունի հաղորդած այս վերջին տեղեկությունը վոմանք հասկանում են այն ձևով, զոր իր Հոռովինոսը ստեղծում և հայկական գրերի զանազան տեսակները, ըստ վորում, Կորյունի հիշված հատվածը նման մեկնաբանություն տվող բանասիրները «Նըրագոյն»-ը համարում են նոտր գրը (!), «Կարճ»-ը—ուղղագիծ յերկաթգիրը, «յերկայն»-ը—բոլորածեկ յերկաթգիրը և «առանձին»-ը—փակագիրը: Մեր կարծիքով Կորյունի այդ տեղեկությունը ձիւտ չի մեկնաբանվում: Տեքստում պարզ ասված ե, զոր Հոռովինոսը խնամքով զանազանեց թանձը և նուրբ, կարճ և յերկար գծերը՝ լինեն նրանք ինքնակապ կամ զուգընթաց՝ պատշաճելով և ներդաշնակելով իրար:

Մաշտոցն այսուհետև վերադառնում ե Հայաստան և սկսում մեծ աշխատանք՝ ինչպես թարգմանության, այնպես և ինքնուրույն ստեղծագործության գծով:

2. ՀԱՅԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿՈՒՅՆ ՆՄՈՒՇՆԵՐԸ:

Հայկական պալեոգրաֆիայի հիմնական բազան—հայերեն ձեռագրերը և վիմագիր արձանագրություններն են: Նրանց քանակը վերջնականապես ճշտված չե, ձեռագրերի մոտավոր թիվը—23 հազար և հաշվում, իսկ վիմագիր արձանագրություններինը—2-3 հազար: Վիմական արձանագրությունները գտնվում են գլխավորապես Հայաստանի նախկին տերիտորիայում, իսկ ձեռագրերը ցըված են աշխարհի գրեթե բոլոր գլխավոր քաղաքների թանգարաններում:

Հայկական ձեռագրերի ամենամեծ ժողովածուն աշխարհում հանդիսանում ե մեր պետական մատենադարանը: Մենք ունենք մոտ 10,000 ձեռագրեր: Մեր մատենադարանի ժողովածույթը մեջ մտնում են՝ նախկին Եջմիածնի, Տաճկահայաստանի, Սեվանի,

Տաթևի, Ներսիսյան դպրոցի, Լաղարյան ձեմարանի, Յերեվանի գրական թանգարանի, Պետական համալսարանի և բազմաթիվ այլ ժողովածուներ:

Հայկական ձեռագրերի հարուստ և արժեքավոր ժողովածուներ են հանդիսանում Վենետիկի միաժարյան միաբանության մատենադարանը—մոտ 4,000 ձեռագրով, Յերուսաղեմի հայկական պատրիարքարանի մատենադարանը—մոտ 3000 ձեռագրով, Վիեննայի Միիթարյան միաբանության մատենադարանը—մոտ 600 ձեռագրերով և այլն:

Վիմական արձանագրությունների զգալի մասը հրատարակված ե: Այդ ուղղությամբ ամբողջացնող լավագույն աշխատություններ են հանդիսանում՝ Կարապետ Կոստանյանի կազմած «Վիմական տարեգիր» (Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց)»-ը, ակադեմիկ Ն. Մառի Տիկորի տաճարի, Սանահինի և Բերդածորի կամուրջների մասին արձանագրությունների ուսումնասիրությունը (տես «Հրիտանական Վոստօք» տ. IV, մ III և IV), ակադ. Հ. Որբելու՝ Մարմաշինի, Բագավանի և հայկական տատարաց արձանագրությունների մասին կատարած ուսումնասիրությունը (տես «Հրիտանական Վոստօք» տ. II, մ I, տ. III մ 3, տ. V մ. 2) և այլն:

Մեծ աշխատանք ե կատարված նաև հայերեն ձեռագրերի ցուցակների հրատարակման ուղղությամբ: Ձեռագրերի արժեքավոր ցուցակներ են հանդիսանում Տաշյանի կազմած «Վիեննայի Միիթարյան մատենադարանի ձեռագրերի ցուցակը», Ն. Յ. Մառի կազմած՝ Սեվանի ձեռագրերի ցուցակը, Հ. Աճառյանի՝ Թարվիկի ձեռագրերի ցուցակը, Յ. Լալայանի՝ Վասպուրականի ձեռագրերի ցուցակը, Սարգսյանի՝ Վենետիկի մատենադարանի ցուցակը, Շահնազարյանի (Կարինյանի հրատարակությամբ)՝ Եջմիածնի ձեռագրերի ցուցակը, Բասմաջյանի՝ Փարիզի աղջային մատենադարանի ձեռագրերի ցուցակը, Թոփճյանի՝ Խաչիկ վարդ.—ի ձեռագրերի ցուցակը, Քարամյանի՝ Բեռլինի արքունի մատենադարանի ձեռագրերի ցուցակը և ուրիշները:

Անհրաժեշտ ե նշել, զոր կան ձեռագրերի մի շարք ցուցակներ, վորոնք կազմվել են գեռես միջին դարերում: Մեր հասել ե, որինակ, Վարդան Բաղրամյան՝ ձեռագրերի ցուցակը (տես մեր մատենադարանի թիվ 737 ձեռագրերը), Սանահինի վանքի XVII դ. ձեռագրերի ցուցակը (տես մեր մատենադարանի թիվ 3031 Սանահինի Քյոթուկ կոչվող ձեռագրերը) և այլն:

Վերջերս կազմված ե և կհրատարակվի մեր մատենադարա-

¹ Մեծ Կորյուն, եջ 19 (Վենետիկի հրատարակություն):

Նի ձեռագրերի ամբողջական ցուցակը։ Այդ ցուցակի մեջ կմտնեն ինչպես հայերեն, այնպես և այլ լեզուներով (արաբերեն, պարսկերեն, վրացերեն, հունարեն և այլն) յեղած ձեռագրերի նկարագրությունները։

Հնագույն հեղինակների աշխատություններից մեծ մասը, վորոնց թվում և հին հայ հեղինակների աշխատությունների զգալի մասը, իրենց ավտոգրաֆներով (ինքնագրերով) չեն հասել մեզ։ Նրանց աշխատություններն ընդորինակվել են ուշ շրջանի արտագրողների կողմից, և մեծ մասամբ այդ ընդորինակություններով ե, վոր մենք ծանոթանում ենք հին հեղինակների աշխատությունների հետ։ Այսպես, մեզ չի հասել Խորենացու, Յեղիշեյի, Յեղիկի, Շիրակացու, Ղեվոնդի, Անեցու և հին հայ մի շարք այլ մատենագիրների աշխատությունների ինքնագրերը։ Խորենացու պատմության մեզ հասած ամենահին ձեռագիրը—IX դարում գըրգած մի պատափիկ ե, վորը գտնվում է մեր մատենագրարանում։ Յեղիշեյի պատմության ամենահին ձեռագիրը «Անձեւացյաց» կոչվող որինակն ե, վորն ընդորինակված ե 1172 թվին (գտնվում է մեր մատենագրարանում), Յեղիկի «Եղծ աղանդոց»-ի միակ և ամենահին ընդորինակությունը 1280 թվից ե (գտնվում է մեր մատենագրարանում), Շիրակացու «Յաղագս երկնի» աշխատության մեզ հասած հին ընդորինակությունը 971 թվից ե (գտնվում է մեր մատենագրարանի ամենահին թղթի ձեռագրի ժողովածույթում), Ղեվոնդի պատմության մեզ հասած ամենահին ձեռագիրը XIII դարում կատարված ընդորինակությունն ե (մեր մատենագրանի սեփականությունն ե), Սամվել Անեցու ժամանակագրության մեզ հասած ամենահին ձեռագիրը 1176 թվի ընդորինակությունն ե, կատարված և Անեցու կենդանության ժամանակ (գտնվում է ձեռագիրը մեր մատենագրարանում)։ Շատ քիչ քանակություն են կազմում մեզ հասած միջնադարյան հայ մատենագիրների ինքնագիր ձեռագրերը։ Այդ մատենագիրներից են՝ Որբելյանը, Յեսայի Նշեցին, Գրիգոր Տաթևացին, Ամիրդովլաթը և ուրիշները։


Հին հայերեն լեզվով մեզ հասած ամենահին գիրը — Տիկորի արձանագրությունն ե։ Նա գրված է Հովհաննես I Մանդակունի կաթողիկոսի ժամանակ (478—490 թ.)։ Արձանագրության մեջ հիշվում ե նաև Սահակ Կամսարականը, վորը V դարի անձնավորությունն ե. «...Հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յովհանու Հայոց կաթողիկոսութեան եւ Յոհանու Արշարունեաց» յիւր բարեխաւութիւն եւ բոլոր ազգին եւ ամուսնի եւ որդեկաց եւ

սիրելեաց եւ Սահակ Կամսարական շինեաց զ(այ)ս վկայարան սրբոյ Սարգսի։

V դարի գրչություն ե համարվում նաև մեր մատենագրանի № 1577 ձեռագրի պահպանակը։ Ձեռագիրը 1283 թվին կազմելիս վերցրել և պահպանակ են գործ ածել այդ ժամանակ քայքայված հնագույն ձեռագրի թերթեր, վորոնք V դարի գրչություն ունեն։ Պահպանակը V դար համարվում ե յենթագրաբար՝ գրի պալեոգրաֆիկ տվյալների և գրության արխայիկ բնույթի հիման վրա։ Գրությունն, իր ձևով, ամենահինն ե յերեսում քան մեզ հայտնի հայկական գրություններից վորևէ մեկը։ Այսուղ մենք առաջին անգամ հանդիպում ենք«ըստ կազմակերպության միացած ձեղիք» և «քառական միջին գիծը ներքեւ և իջնում սեպի նման սուր ծայրերով, «առյօնի վերջին յելանը վհչ թե ներքեւ և թեքվում, ինչպես Լազարյան ավետարանում ե կամ մեսրոպյան այլ գրերում, այլ հունական «Ճ»-ի նման բարձրանում ե վերև և այլն։

VII դարում գրված հայկական գրության արժեքավոր ունիկումներից ե համարվում պըրոֆ. Կարիկորի՝ Յեղիպոսոսում ձեռք բերած պապիրուսը։ Նա գրված է հայատառ հունարեն։ Տեքստը, գժբախտաբար, վնասված է և ամբողջությամբ չի կարդացվում։ Նա հրատարակված է Տաշյանի կողմից նրա «Ակնարկ» մը հայ հնագրութեան վրայց աշխատության մեջ։

VII դարից մեզ հասած հայերեն արձանագրություններից



Նկ. 1.—№ 1577 ձեռագրի պահպանակի տառաձեկը՝ Լազարյան ավետարանի տառերի հետ համեմատած

մեծ արժեք և ներկայացնում Յերուսաղեմի Զիթենյաց սարի վրա՝
գտնվող սողայիկ արձանագրությունը: Վոմանք այդ արձանա-
գրությունը համարում են VII դարում գրված: Արձանագրությու-
նը գրվել ե վոմն Վաղեսի կողմից:

VII դարից մեզ հասել են հայկական գրության մի շարք
նմուշներ: Այդ արձանագրություններից թվական ունի Անիի միջ-
նաբերդի՝ Կամսարականների բաղիւթք յեկեղեցու վրա յեղած վի-
մագիր արձանագրությունը: Ակադ. Ն. Յ. Մառը սկզբում կաս-
կածել ե արձանագրության ժամանակի նկատմամբ, բայց հե-
տագայում մոտից ուսումնասիրելով արձանագրությունը գտել
է, վոր իրոք նա գրվել ե նշված թվականում (տես Հ. Մարր,
Новые археологические данные о постройках типа Ере-
йской базилики З. В. О. XIX.).



Նկ. 2.—Յերուսաղեմի սողայիկ արձանագրություն. սրբոց վկայից քի:

VII դարի արժեքա-
վոր արձանագրություններից ե Թալինի մատուի արձանագրու-
թյունը, վորը թողել ե Ներսես Կամսարականը, հավանական ե,
վեց հարյուր յերեսնական թվականներին: («Ես Ներսես ապօնւ-
պատ պա (տրիկ Շիր) ակայ եւ Արշարունեաց տէր շինեցի զեկե-
ղեցիս...») և Մթենի տաճարի արձանագրությունը՝ գրված Դավիթ
Սահառունու կուրապալատության ժամանակ (638—640 թ. թ.):
Այս յերկու արձանագրությունները մանրամասն ուսումնասիր-
ված են ակադեմ. Հ. Ա. Որբելու կողմից (տես «Христ. Восток»,
том II, вып. СПБ. 1913):

VII դարի գրչություն ունեցող եքսպոնատներից կարելի յե-

հիշատակել մեր մատենագրանի մի շարք ձեռագիր պատառիկ-
ներ: Նրանցից կարելի յե նշել № 108 և 109 պատառիկները:
Պալեօրաֆիկ և սումնասիրությունը պարզում է, վոր այդ պա-
տառիկներն ունեն միշտ այնպիսի գրության ձև, ինչպիսին VII
դարի գրություն ունեցող հայկական արձանագրություններն են:

Հայերեն լեզվով մեզ հասած ամենահին ձեռագիրն աշխար-
հում, վորը թվական ունի—դա Լազարյան կոչվող ավետարանն
է: Նա գտնվում է մեր մատենադարանում: Ձեռագիրն ունի
գրչի հետեւյալ հիշատակարանը. «Գրեցաւ սուրբ եւ կենսաբեր
աւետարանս այս ՅԵՂ (=336 + 551 = 887) թուականութեան Հայոց
ի հայրապետութեանն [ԳԵ] որդայ Հայոց կաթողիկոսի եւ յիշխա-
նութեանն Աշոտի իշխանաց իշխանի եւ ի տերութեանն Սմբա-
տայ Բագրատունւոյ. ես Սահակ Վանանդեցի որդի Վարդա Վա-
նանդացւոյ որում կրկին Մին Կոչեի [Ա]»:

Գրչության հասգույն և լավագույն եքսպոնատներից ե 909
թվին Մլքե թագուհու պատվերով գրված մանրանկարչական մեծ
արժեք ներկայացնող ավետարանը: Նա ունի հետևյալ հիշատա-
կարանը. «Ես Մլքե աղախին քրիստոսի և Հայոց թագուհի...թվա-
կանիս, ետու զաւետարանս ի Վարագի սուրբ Աստուածածնիս զոր
իմ ձեռագրս և ծահաւք եմ շինեալ յաւգնականութիւն ինձ և ար-
քային իմոյ Գագկայ և զաւակաց իւրոց...ՅԾԱ. թ. արաց իլ...»: Ձեռա-
գիրը գտնվում է Վեհականի Մխիթարյանների մատենագրա-
րանում:

X դարից մեզ հասել են մի շարք այլ ձեռագրեր, վորոնք
բոլորն ել կանոնական բովանդակություն ունեն և գրված են
մագաղաթի (պերգամենտի) վրա: Մեզ հասած ամենահին հայե-
րեն (լեզվով գրված) ձեռագիրն աշխարհում,—մեր մատենագրա-
րանի № 2679 ձեռագիրն է և վորը պատմագիտական նյութերի
ժողովածու յե հանդիսանում: Հիշատակարանից յերեւում է, վոր
նա գրվել ե 971 թվին: Ձեռագիրը տասը տարի հետո նորոգվել
ե: Նորոգողը թողել ե իր հետեւյալ հիշատակագրությունը. «Եւ է
նորոգումն սորա ՆԼ (= 981) թուականութեանս հայոց»:

Գրչության հնության տեսակետից մեծ արժեք և ներկա-
յացնում մեր մատենադարանի թիվ 963 մագաղաթյա ձեռագիրը:
Ձեռագիրը պալիմսետ է (կրկնագիր): Պալիմսետ կոչվում են
այն ձեռագրերը, վորոնք մեկ անգամ գրվում են մագաղաթի վրա,
իսկ հետագայում այդ գրված տեքստը ուրիշ մեկի կողմից լվաց-
վում ե և նորից գրվում: Հաճախ ե պատահում, վոր նման լվաց-



ված ձեռագրերում նախկին տեքստը նոր գրվածի տակից յերեւ-
վում ե: Մեր նշված ձեռագրը պատկանում է հենց այդ ձեռա-
գրերի թվին: Ձեռագրի հիշատակարանից յերեւում ե, վոր Հովհան-
նես անունով մեկը, հավանական է XIII դարում, լվացել է հա-
յերենով գրված հին տեքստը, վորը, հավանական ե, գրված
ե յեղել VIII դարից առաջ: Զբացված մնացել են ձեռագրերի
պահպանակները: Այս ձեռագրում մնացել է հին հայկական ման-
րանկարչության մի գեղեցիկ նմուշ՝ մուգ կապույտ գույներով:

Վերջապես, հնագիտական մեծ արժեք ե ներկայացնում մեր
մատենագրանի «Գլուկը» կոչվող ավետարանը, վորը զրված ե
998 թվին: Սա ամենահին հայերեն ձեռագրերից մեկն ե, վորը
իլյուստրացիա ունի: Նրա մեջ յեղած նկարներն ու զարդարու-
թյունները գեղարվեստական մեծ արժեք են ներկայացնում: Ձե-
ռագրի կազմը համարվում ե V դարի գործ:

Բացի թվարկած հնագիտական արժեքավոր այս տեքստե-
րից, մենք մեր մատենագրանում ունենք մեծ քանակությամբ
պատառիկներ և պահպանակներ, վորոնք դեռ ուսումնասիրված չեն:

3. ՀԱՅ ԳՐԻՉՆԵՐԸ

Գրիչները—հայ անցյալ կուլտուրայի պահպանման ու զար-
գացման չարքաշ մշակներն են հանդիսացել: Հալածանքի, սովի,
զաղթի և ամեն տեսակի ծանր պայմաններում նրանք անգնահա-
տելի աշխատանք են կատարել ինչպես հին հայկական ձեռագրե-
րի ընդորինակման, այնպես և ստեղծագործական նոր արժեքնե-
րով հայկական կուլտուրան և գրականությունը հարստացնելու
ուղղությամբ:

Հայկական գրիչների վորոշ մասը, հատկապես նրանք, վո-
րոնք ցածր խավերից են,—պրոֆեսիոնալ գրչությամբ զբաղվող
մարդիկ են հանդիսացել: ՀԽՍՀ Պետ. մատենագրանի թիվ 4107
ձեռագրի գրիչը եր 1420 թվ. ընդորինակած ձեռագրում հետեւ-
յալն ե գրում: «Բայց գիտեմք, որ գիրդ բաղում պակասութիւն
կայ և անթիւ. թէպէտ որ՝ շատ կայ՝ մեր կարն այդչափող էր,
ձեռս կու դողայը և աչքու ընաւ չէր տեսնուր, զրչի մատն չորա-
ցած էր, միջին մատամբս ծրեցաք... ո՞հ դարդ իմ՝ հիմայ 42 (ԽԲ)՝
տարի է որ մեր ըանս այս է, ապա այսօր նման անդէպ չէր
եղեալ, խիստ կու ամաշիմ ի ձեզնէ, թողութիւն արարէք»: Քա-
ռասուն և յերկու տարի մարդը զբաղվել է զրչությամբ, գրելու
մատը չորացել է, բայց նա չի ուզել ցած դնել իր գրիչը: 34-րդ

տետրակից հետո նա դադարում ե գրելուց և նրա աշխատանքը
շարունակում է իր աշակերտը, Հունար գրիչը:

Մի ուրիշ գրիչ, վորն իր ամբողջ կյանքում զբաղվել ե
ընդորինակություններով և այդ ընդորինակությունները վաճա-
ռելով ե ապրուստ հայթհայթել իր վոտանավոր հիշատակարա-
նում գանգատվում ե (ձեռագիրն ընդորինակված ե 1280 թ. Բա-
սիլ գրչի կողմից).

«Քանքար չգոյր զի վարձէի՝
Մատատամբս քանի՛ ես գրէի:

Յայս միջոցին անձն իմ կոծի
եւ վարանի յամենայնի,
Թէ զի՞նչ օգուտ ինձ յայս ջանի,
Թէ ընթեռնուլ ինձ նչ լինի:
Մի յոյս միայն գերոյս թողի՝
Թէ եկելոց վայել լինի:
Զի թէ այս ոչ գոյր առաջի՝
Կարծեն սակաւ գոյր գիր յերկրի:
Որպէս և ես վարանէի,
Աւաղ թէ ընդ վայր ջանս իմ լինի:
Եւ ամենայն, որ զայս խորհի:
Սակաւ տանի հոգք այս գործի:
Այդ ըստ յուսոյն որ կայ առաջի՝
Միշտ յօժարեալ գիրս ոք ստացի:
Զի տէրունի բանն լցցի՝
Այլոց վաստակ այլում լինի...»:

(Տես ՀԽՍՀ Պետ. մատենագրանի թիվ 1418 ձեռագիր՝ թերթ 125ա):

Գրիչների վորոշ մասը, պիտագորապես յեկեղեցական բար-
ձր գասին պատկանող անձինք, ապրել են բավականին շքեղ ու
փարթամ կյանքով, իսկ մյուս մասը, ավելի ստորին խավերը, աշ-
խատել և ստեղծագործել են շատ ծանր պայմաններում: Նրանք
հաճախ են զանգատվում ցրտի, լույսի վատության, տանիքը
կաթելու, հացի պակասության և այլ գժվարությունների մասին:

ՀԽՍՀ Պետ. մատենագրանի թիվ 2544 ձեռագրի գրիչն իր
պատվիրատույից ինդրում և ներողամիտ լինել ձեռագրի պակա-
սության համար: Յես զիտեմ, —ասում ենա իր պատվիրատույին, —
վոր այդ ձեզ վայել ձեռագրի չե, ձեզ համար գրածը «ուկէզիր
պիտէր և ճարտար գրչի, և ես շատ պատճառ ունիի, որ խափա-
նէր զիս յայս ձեռնարկութենէս՝ տկարութիւն և մութն խրճիթս և
հողմ պախարու, փոշէխառն փչելով ընդ պատուհանու և պաղ աւզս...»:

ված ձեռագրերում նախկին տեքստը նոր գրվածի տակից յերեւ վում եւ Մեր նշված ձեռագիրը պատկանում եւ հենց այդ ձեռագրերի թվին։ Ձեռագրի հիշատակարանից յերեւմ եւ, վոր Հովհաննանս անոնավ մեկը, հավանական եւ XIII դարում, լվացել եւ հայերենով գրված հին տեքստը, վորը, հավանական եւ, գրված եւ յեղել VIII դարից առաջ։ Զլվացված մնացել են ձեռագրերի պահպանակները։ Այս ձեռագրում մնացել եւ հին հայկական մասնակարչության մի գեղեցիկ նմուշ՝ մուգ կապույտ գույներով։

Վերջապես, հնագիտական մեծ արժեք եւ ներկայացնում մեր մատենագրարանի «փղոսկրե» կոչվող ավետարանը, վորը գրված եւ 998 թվին։ Սա ամենահին հայերեն ձեռագրերից մեկն եւ, վորը իլյուստրացիա ունի։ Նրա մեջ յեղած նկարներն ու զարդագրությունները գեղարվեստական մեծ արժեք են ներկայացնում։ Ձեռագրի կազմը համարվում եւ V դարի գործ։

Բացի թվարկած հնագիտական արժեքավոր այս տեքստերից, մենք մեր մատենագրարանում ունենք մեծ քանակությամբ պատառիկներ և պահպանակներ, վորոնք դեռ ուսումնասիրված չեն։

3. ՀԱՅ ԳՐԻՉՆԵՐԸ

Դրիչները—հայ անցյալ կուլտուրայի պահպանման ու զարգացման չարքաշ մշակներն են հանդիսացել։ Հալածանքի, սովի, գաղթի և ամեն տեսակի ծանր պայմաններում նրանք անգնահատելի աշխատանք են կատարել ինչպես հին հայկական ձեռագրերի ընդորինակման, այնպես և ստեղծագործական նոր արժեքներով հայկական կուլտուրան և գրականությունը հարստացնելու ուղղությամբ։

Հայկական գրիչների վորոշ մասը, հատկապես նրանք, վորոնք ցածր խավերից են, —պրոֆեսիոնալ գրչությամբ զբաղվող մարդիկ են հանդիսացել։ Հիւմչ Պետ. մատենագրարանի թիվ 4107 ձեռագրի գրիչը եր 1420 թվ. ընդորինակած ձեռագրում հետևյալն ե գրում. «Բայց գիտեմք, որ գիրդ բազում պակասութիւն կայ և անթիւ. թէպէտ որ՝ շատ կայ՝ մեր կարն այդչափդ էր, ձեռս կու գողայր և աչքս բնաւ չեր տեսնուք, գրչի մատն չորացած էր, միջին մատամբս ծրեցաք... ո՞հ դարդ իմ՝ հիմայ 42 (ԽԲ) տարի է որ մեր բանս այս է, ապա այսօր նման անդէպ չեր եղեալ, իբիստ կու ամաչեմ ի ձեզնէ, թողութիւն արարէք»։ Քառասուն և յերկու տարի մարդը զբաղվել ե գրչությամբ, գրելու մատը չորացել ե, բայց նա չի ուզել ցած դնել իր գրիչը։ 34-րդ

տետրակից հետո նա դադարում ե գրելուց և նրա աշխատանքը շարունակում ե իր աշակերտը, Հունար գրիչը։

Մի ուրիշ գրիչ վորն իր ամբողջ կյանքում զբաղվել ե ընդորինակություններով և այդ ընդորինակությունները վաճառելով ե ապրուստ հայթնայթել, իր վոտանավոր հիշատակարանում գանգատվում ե (ձեռագիրն ընդորինակված ե 1280 թ. Բամբիլ գրչի կողմից)։

«Քանքար չգոյր զի վարձէի՝
Մատատամբս քանի՛ ես գրէի»

Յայս միջոցին անձն իմ կոծի
Եւ վարանի յամենայնի,
Թէ զի՞նչ օգուտ ինձ յայս ջանի,
Թէ ընթեռնուլ ինձ ոչ լինի:
Մի յոյս միայն գերոյս թողի՝
Թէ եկելոց վայել լինի:
Զի թէ այս ոչ գոյր առաջի՝
Կարծեմ սակաւ գոյր գիր յերկրի:
Որպէս և ես վարանէի,
Աւաղ թէ ընդ վայր ջանս իմ լինի:
Եւ ամենայն, որ զայս խորհի,
Սակաւ տանի հողք այս գործի:
Այդ ըստ յուսոյն որ կայ առաջի՝
Միշտ յօժարեալ գիրս ոք ստասցի:
Զի տէրունի բանն լցցի՝
Այլոց վաստակ այլում լինի...»։

(ՏԵս ՀԽՍՀ Պետ. մատենագրարանի թիվ 1418 ձեռագիր՝ թերթ 125այ։)

Դրիչների վորոշ մասը, գլխավորապես յեկեղեցական բարձը գտածն պատկանող անձինք, ապրել են բավականին շքեղ ու փարթամ կյանքով, իսկ մյուս մասը, ավելի ստորին խավերը, աշխատել և ստեղծագործել են շատ ծանր պայմաններում։ Նրանք հաճախ են գանգատվում ցրտի, լույսի վատության, տանիքը կաթելու, հացի պակասության և այլ գժվարությունների մասին։

ՀԽՍՀ Պետ. մատենագրարանի թիվ 2544 ձեռագրի գրիչն իր պատվիրատույից ինդրում ե ներողամիտ լինել ձեռագրի պակասության համար։ Ցես գիտեմ, —ասում ե նա իր պատվիրատույին, — վոր այդ ձեզ վայել ձեռագրի չե, ձեզ համար գրածը «ոսկէզիր պիտէր և ճարտար գրչի, և ես շատ պատճառ ունեի, որ խափանէր զիս յայս ձեռնարկութենէս՝ տկարութիւն և մութն խրճիթս և հողմ պախարու, վորչիսառն վչելով ընդ պատուհանս և պաղ աւդս...»։

ՀԽՍՀ Պետ. մատենադարանի՝ 1663 թվին ընդունակած սկզբանից հիշատակագիր գրել և հետևյալ գանգատը՝

«Մեծի թուականին,
գանգատ ունիմ ճրագի մթին.
այլ և յետոյ՝ այս խնամ թղթին,
որ չի երթար յետ իմ սրտին...»

(Թիվ 5623 թ. 224 Բ.)

Միթաք Անեցին իր՝ 1338 թ. ընդորինակած ձեռագիր վուանավոր հիշատակարանում գանգատվում և մի շարք դժվարությունների համար:

«Մեծ վտանգի կամ յայս նեղուս.
զի խիստ յաղթեց ցավն մարմնոյս:
Եւ ի ձեռացս ի գողալուս.
այլ չեմ կարել տալ շատ գրոյս:
Եւս առաւել ի յայս շողուս,
Ու ի թանաքի թանձրանալոյս,
և մասաւանդ ի յայս քնուս,
զաւր հասարակ մրափելոյս:
Եւ յանիծեալ այս ճանձերուս,
ի մնավաստակ կենդանուս.
որ միշտ նստին ի վերայ գրչուս
ծըծեն զթանաքն գրերուս.
կենէ մի սիրոտ այս ոչընչնուս.
չփառեմ թ(է) բնչ առնեմ նղովնուս.

Այլ երբ կուտա իմ աչքս լրւս.
որ ես այլ շար տամ գրելուս:
Եղբայր մեղ մի գրեք գրերուս,
այս տառապեալ ւողորմելոյս.
ինչ հնացաւ տարիք մատնուս,
պէս պէս ցաւեր յայտնի ծերուս:
Օ՛խ թէ լինէր ճար այս նավուս,
որ հասանէր յեզր ի ծովուս,
որ ես տեսնում զվերջք գրուս.
ու ապա հասանի ի մահն նողուս»:

(Թիվ 4429 ձեռագիր):

Գրիչների վրա առանձնապես ծանր ազդեցություն են ունեցել քաղաքական դժվար պայմանները։ Միքայել Յեղուկեցին իր 1589 թ. ընդորինակած մի ձեռագիր հիշատակարանում ընթերցողներից հետևյալն են խնդրում. «Անմեղադիր լերուք ծռադրչութեան նոտրիս, զի ի մէջ դառնութեան գրեցի զսայ՝ այսպիսի դառն և դժուար տանջանաւք...» (ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 1869 ձեռագիր):

Մի այլ գրիչ իր 1360 թ. ընդորինակած ձեռագիրի հիշատակարանում գրում ե. «Գրեցաւ ի թվ. հայոց. Պթ. ի դառն և յանքարի ժամանակիս, զոր ոչ կարեմ գրով արկանել, բայց միայն լրել» (Յերեվանի ժողովածու, թիվ 49 ձեռագիր):

Գրիչները հաճախ իրենց հիշատակարաններում գանգատվում են՝ լույսի պակասության («Եթե յոճ չսատի քեզ գիրս, նա պատճառն այն էր եղբայր՝ ձէլթի տակն էր և ճրագլուս պակաս»), թանաքի վատության («Աւաղ թանաքիս վատութեան»), կաթիլքի («Վայ յոլովութեան յորդ անձրես, որ խափանումն ածէր գրիս», ճանձի և լուի շատության («Աւաղ բազմութեան ճանջից» և լուիցս, որ յոյժ վատանգին զիսա), թղթի ու գրչի վատության («Վայ քեզ սուտանուն Զաքարիա, գրիչն մեկ անգամ կտրեցի և տասը թուղթ գրեցի»), ցավելի լուրեր լսելու («Աւաղ և վայ որ լուա այսպէս համբաւ», «Ո՞հ ի լսել այսպիսի կսկծանաց գործոյս») և այլ պակասությունների և դժբախտությունների համար։

Շատ են գրիչների մոտ մորեխի, համաձարակի և սովի համար արված գանգատները։ 1713 թվ. ընդորինակված մի ձեռագրի հիշատակարանում գրիչը հետևյալն ե պատմում.

«Ի թիվ հազար հարիւր վացառն,
երկոյ աւել ի հետ ի նոյն,
եկավ մարախ ըազում անհուն
ի քաղաքն երեանոյն։

Մածկեալ եղև երեսս օդոյն,
ենեղ երկնից իբրև զձիւն,
թռաւ իջաւ մէջ արտերոյն,
սկսաւ ուտել իբրև զշոն։

Մահն եկաւ ի նոյն տարոյն,
հաւասարեաց ամէն տեղոյն,
խիստ կոտորեց մանար ոյ մեծոյն,
փառըս տացուք ի աստծոյն։

Սովն եկաւ ի նոյն տարին,
 խանն շահի եղավ գարին,
 սոված փարզեց գաշտ ոյ տարին,
 աստուած փրկէ եկող տարին:
 Մուկն եկաւ ի նոյն տարին,
 հաց ոյ դարման յախիք արին,
 խոտ չմնաց ընաւ ի սարին,
 էլ չտեսնենք այսպէս տարին...»
 (Թիվ 2444 ձեռագիր)

Քիչ չեն նաև տեղահանության, գաղթի համար գրված գան-
 դատները: Շատ կան դեպքեր, յերբ գրիչը սկսում ե վորևե ձե-
 ռագրի ընդորինակություն, մեկ ել ահա հարձակվում ե թշնա-
 մին և նա ստիպված ե լինում գրած ու չզրած մագաղաթը շալա-
 կել և տեղից տեղ տեղափոխվել: Շատ ու քիչ տեղական կանդ
 առած տեղում շարունակում ե գրել և այդ մասին անում ե իր
 հիշատակագրությունը:

Մեզ մոտ, անցյալում, անհրաժեշտ ե նշել, ձեռագիրը ամե-
 նանվիրական իրն ե համարվել: Գաղթելիս հաճախ թողել են ի-
 րենց տան վողջ գույքը, անասունները, բայց ձեռագիրն աշխա-
 տել են աղատել իրենց հետ:

Ձեռագրին անցյալում շնչավորում ե տրվել: Չեն ասում,
 որինակ, ձեռագիրը թալան տարան, այլ ասում են գերի տարան,
 կամ ձեռագիրը գերությունից ազատեցինք:

Ձեռագիրն անցյալում բավականին թանկ ե գնահատվել: Ո-
 րինակ, 1668 թվ. գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Դար-
 ձեալ յիշեցէք գնաւղ սուրբ աւետարանիս զՄարգարիտն, որ ետ
 բ եղ, բ ձի, կով մի և էառ յիշատակ ի մեր էրիցէս...»: Ու-
 րեմն այդ ձեռագիրն արժեցել ե 2 յեղ, 2 ձի և մի կով: Մի այլ
 ձեռագրի հիշատակագրությունից պարզվում ե, վոր տվյալ ձեռա-
 գիրը գանվել ե «գերության» մեջ և և նա «գերութիւն»-ից ազա-
 տելու համար տվել են «կով մի» և փափասի արժէր, ժ շահի
 գրամ, ե քելայ ցորեն՝ ժ փափասու տուին, ազատեցին... ի
 գերութենէն...» (ՀԽՍՀ Պետ. մատենադարան, թիվ 212 (ն. ց.):

Արգելվել ե ընդհանրապես մեկ անգամ գնված ու հիշատակ
 տրված ձեռագիրը նորից վաճառել կամ գրավ զնել: 1442 թվ.
 գրված մի ձեռագրի գրիչ, որինակ, կտակում ե

«Իշխանութիւն ոչ ոք չունի՝
 տալ գրաւական վասն արծաթի,
 կամ վաճառել ընդ քանքարի՝
 զի է՝ յազատ ամենայնի...»

(մեր մատենադարան, ձեռ. թիվ 62, Յերեվանի ժողովածու):

Գրիչներն իրենց ընթերցողներից շատ են ինդրում լավ պա-
 հել ձեռագիրը՝ խնամքով բռնել, հեռու պահել կաթիւթից, կրա-
 կից, մրից և այլ կեղտից: Աստվածատուր զրիչն, որինակ, իր
 1677 թվ. գրած հիշատակարանում հետեւյալն ե ինչըում՝

«Ով դու մանուկ սիրող բանի.
 յինէն պատուէր քեզ այս լիցի.
 յորժամ ընթերցման պատշաճ լինի՝
 Խնամով բռնես և զգուշալի:

 ի հրոյ և ի ջրոյ և ի կաթիւթի,
 և այլ ամենայն անմաքուր բանի...»:

(ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 7046 ձեռագիր)

Մեր թիվ 5597 ձեռագրի հիշատակագիրը իր ընթերցողին
 պատվիրում է՝ «զգուշացիր յամենայն դժբողաց զսայ, ի ցեցոյ
 և ի կերչաց և ի հւեթոց և յամենայն վասնողաց զվայելչութեան
 դորա, միանկամայն և վերարկուծածկութիւն հոգ տարցես դմալ,
 և որպես իմաստուն վաճառական պատուական մարգարտաց...»:

Ձեռագրերի վրա գրիչները աշխատել են բավականին յեր-
 կար ժամանակ: Վորոշ ձեռագրերի տառերը, կարելի յե ասել վոչ
 թե գրել այլ նկարել են: Պատահում են ձեռագրեր, վորոնք գըր-
 վել են յերեք, չորս և ավելի տարիների ընթացքում: Այսպիս-
 սեր մատենադարանի թիվ 4472 ձեռագրի գրիչը իր ընդորինակած
 ձեռագրի մասին հետեւյալ տեղեկությունն ե տալիս. «Եւ գիտելի է
 զի սա սկսաք ԶԱ. թվականիս հայոց և աւարտեցաք ԶԶ. վասն
 դառնութեան և խոռվութեան ժամանակիս: Եւ զյիշատակարանի
 զհետ կարգի ոչ զնալոյն անմեղագիր լեռուք՝ երբ սիրտն մաշ-
 խեալ մնի՝ աչքն լուս պակաս կու հայի: Մարդ զմարդոյ ցաւ
 չգիտէ՝ կէս զիշերին ժամ կու ձենէ: Մի այլ ձեռագրի գրիչ
 1378 թվ. գրած իր հիշատակարանում հայտնում ե. «...յոշնակի
 սիրով գրեցի ամս է» (ՀԽՍՀ Պետ. մատենադարան, թիվ 2680):
 Բացի գրչից, ձեռագրի վրա հաճախ աշխատում են նաև այլ

մասնագետներ՝ նկարիչներ (ծաղկողներ), մագաղաթը կոկողներ, ձեռագիրը կազմողներ և այլն: Գրիչն այդ գեպօռամ իր հիշատակարանում խնդրում է հիշել իրեն ոգնող այդ մասնագետներին: Յեթե գրիչը մյուս աշխատանքները ևս ինքն ե կատարում, կամ գնել ե թուղթը, սովորաբար հիշում է իր հիշատակարանում: Հիշէ Պետ. մատենադարանի թիվ 5568 ձեռագրի հիշատակագիրը հետեւյան և հայտնում:

«Նիւթ և մելան գղթորիս, թողին է արջասպն աւղթիցիս,
գույն սպիտակ քարտէղիս, թանկ գնեցի ևս գիրիս...»:

4. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Հայկական գրերի տեսակավորման խնդրում աղբյուրագիւտության մեջ գոյություն ունեն տարբեր տեսակետներ: Կարելի յե ասել, վոր հայկական գրերով գրադրուդ ամեն մի հեղինակ տվել և գրերի իր սեփական տեսակավորումը: Հայկական գրերի տեսակավորման հարցում յեղած կարծիքների այդ տարբերությունը բղիսում ե մասամբ աղբյուրագետների տառաձերի նկատմամբ ունեցած վերաբերունքի տարբերությունից: Այսպիս, որինակ, վոմանք գրերի տեսակավորման հիմքը տառերի մեծությունն են ընդունում, վոմանք—գծագրական բնորոշ հատկանիշները և այլն:

Հայկական գրերի տեսակավորման հարցով լուրջ գրադրվել ե Քարամյանցը: Նա ընդունում է յոթ տեսակ գրեր և տալիս ե նրանց գրչության հետեւյալ ժամանակները¹:

- | | |
|-------------------------|--------------------------------------|
| 1. Մեսրոպյան յերկաթագիր | Ե—Ը դար, |
| 2. Միջակ գիր | Ը—Ժ դար, |
| 3. Փոքր յերկաթագիր | Ժ—ԺԲ դար, |
| 4. Բոլորգիր | ԺԲ—ԺԴ դար, |
| 5. Նոտր | ԺԴ—ԺԲ դար, |
| 6. Շեղագիր | ԺԲ—ԺԹ դար, |
| 7. Նոր շեղագիր | ԺԹ—ԽԸ մինչև մեր որերը ² : |

Ինձիճյանն ընդունում է գրերի հինգ տեսակ՝ նշելով միայն նրանց ծագման ժամանակը³:

1. Յերկաթագիր Ե դարից հետո,
2. Յերկայնաձեւ յերկաթագիր Ժ-ԺԱ դարերից հետո,

3. Միջակագիր այդ նույն ժամանակում,

4. Բոլորգիր ԺԲ դարից հետո,

5. Նոտր գիր⁴:

Հայկական գրերի տեսակավորման նոր փորձ ե անում Հ. Տաշյանը: Նա բացի գրերի հիմնական տեսակներից ընդունում ե նաև անցման գրեր, ըստ վորում, հայկական գրերը նա տեսակավորում ե հետեւյալ յոթ խմբի մեջ՝

1. Գլուխագիր յերկաթագիր,
2. Միջին մեսրոպյան յերկաթագիր,
3. Փոքր յերկաթագիր,
4. Անցման գիր,
5. Բոլոր գիր,
6. Նոտր,
7. Շղագիր⁵:

Անհրաժեշտ ե նշել վոր Հ. Տաշյանն առաջինն ե, վոր հակառակ նախորդ աղբյուրագետների կարծիքի, աշխատել ե ապացուցել, վոր գրերի վորոշ տեսակներ, մասնավորապես փոքր յերկաթագիրը, ավելի հնից են դալիս, քան յենթադրվում են կանոնական-կրոնական գրականության համար գործ են ածվել գրւխագիր և միջին-մեսրոպյան յերկաթագրերը, իսկ պատմա-գիւտական գրականության մեջ—փոքր յերկաթագիրը:

Գրերի նոր և գիտական տեսակավորման փորձ ե արել նոր ընկերությունը, իր «Հայկական գրի սկզբնական տեսակները» աշխատության մեջ՝ տեսակավորման հիմքն ընդունելով գծագրական առանձնահատկությունները: Նա ընդունում է հինգ տեսակ հայերեն գրեր՝

1. Բոլորաձեւ յերկաթագիր,
2. Ուղղագիծ յերկաթագիր,
3. Բոլոր գիր,
4. Շղագիր⁶:
5. Նոտր գիր

Գրերի տեսակներից վոչ մեկն ընկ. Ղաֆաղարյանը ժամանակի մեջ չի սահմանագծում՝ համարելով գրերի այդ բոլոր տե-

¹ Ինձիճյան, Հնախօսութիւն, Գ, Էջ 77-78:

² Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Էջ 34-49:

³ Կ. Ղաֆաղարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Էջ 17-18:

⁴ N. Karamianz, Verzeichniss ... էջ 38.

սակները Մեսրոպի ձեռքով ստեղծած և բոլոր ժամանակներում գործ ածվող գրեր:

Գրերի նոր ձեփ տեսակավորումը ընկ. կ. Ղաֆաղարյանի կողմից պետք է ասել, հետաքրքիր եւ և ընդունելի: Իրապես գծագրական տառանձնահատկությունների հիման վրա կատարած տեսակավորումն ավելի գիտական ե, քան ուրիշ վարեկ հատկանշի: Սակայն ընկ. Ղաֆաղարյանի այն դրվածքը վոր հայկական գրերի բոլոր տեսակներն անխտիր V դ. են ստեղծվել զիտական լուրջ կովաններով չի հիմնավորվում: Գրերի վորոշ տեսակներ կարող են ավելի հնից դար, քան յենթադրվում ե, ինչպես նկատել ե Տաշյանը, բայց վոր հայկական գրերը ևս հարեւան մյուս ժողովուրդների գրերի նման ունեցել են իրենց զարգացումն ու փոփոխությունը—դա կասկածից գուրս ե:

Հայկական գրերը, մեր կարծիքով, պիտի բաժանել չորս հիմնական տեսակների՝ յերկաթագիր, բոլորգիր, նոտր գիր և շղագիր: Յերկաթգիրն, իր հերթին, պիտի բաժանել յերեք խմբի—բոլորձեւ յերկաթագիր, ուղղագիծ յերկաթագիր և մանր յերկաթագիր: Վորոշել այս գրերից յուրաքանչյուր տեսակի գործադըրման ճիշտ ժամանակը—անհար ե: Մեղ չեն հասել հնագույն տեքստերի մեծ մասը և մենք չգիտենք, որինակ, թե ինչ տեսակ գրով եյին գրվում պատմա-զիտական բովանդակություն ունեցող ձեռագրերը V դարում: Մենք կարող ենք միայն մոտավորապես, ընդհանուր ձևով ասել, թե գրերի այս կամ այն տեսակը վոր գարերումն եր գերիշխող հանդիսանում և ինչպեսի բովանդակություն ունեցող ձեռագրերում:

5. ՅԵՐԿԱԹԱԳԻՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇԵՐԸ

Մեղ հասած հայկական գրության ամենահին տեսակը—յերկաթագիրն ե հանդիսանում: Յենթագրվում ե, թե նա յերկաթագիր ե կոչվում այն պատճառով, վոր գրվել ե յերկաթե ձողերով: Կան բանասերներ, վորոնք յերկաթագրի անունը բացատրում են վոչ թե յերկաթե ձողերով գրելու, այլ յերկաթե ժանդից թանք պատրաստելու պատճառով:

Գրերի այդ տեսակը յերկաթագիրը անունով մեր մատենագրության մեջ հիշելն այնքան ել հին չե: Ամենահին հեղինակը, վորը գործ ե ածել այդ տերմինը, վորքան մեղ հայտնի յե, Միթար Ապարանցին եւ նա, խոսելով աստվածաշնչի մասին, հայտնում ե, վոր նրա գանաղան մասերը գտնվում են ոի մագաղաթ

եւ ի թուղթ, երկարագիր եւ գրչագիր»: Մասնավորելով նա խոսքը սաղմոսի վրա, գրում ե. «Ոչ է միապէս ամենայն Սազմոսարան, որպէս յայտ է յերկարագիր եւ ի գրչագիր եւ յայլ միջակմա» (համեմ «Հայկագեան բառարան»):

Յերկաթագրով են գրված մեզ հասած հին հայկական գրեթե բոլոր ձեռագրերն ու վիմագիր արձանագրությունները: Կանոնական-կրոնական բովանդակություն ունեցող գրականությունը զրված ե բոլորգիծ և ուղղագիծ յերկաթագրերով, իսկ պատմա-զիտական և մեկնողական գրականությունը—մանր յերկաթագրով: Մանր յերկաթագիրը, հավանական ե, մեր գրականության մեջ սկսվել ե գործ ածվել V դարից:

Իրար հետ հավասար հնություն չունեն բոլորգիրը և ուղղագիծ յերկաթագիրը: Առաջինը գործադրվել է հնագույն շրջանում, իսկ յերկրորդը մոտավորապես—IX—X դ. դ.:

Յերկաթագիրը, համեմատած գրերի մյուս

տեսակների հետ, ունի հետեւյալ առանձնահատկությունները.—

ա) Յերկաթագիրը մի քանի անգամ խուզուր ե, քան հայկական գրության մյուս տեսակները:


բ) Յերկաթագրով գրված տեքստերի մեծ մասը չգիտե բառանձատում—յերեք, չորս

և յերբեմն ավելի բար նկ. 3. Բոլորձեւ յերկաթագիր VIII - IX դ. դ. ուրեք գրվում են միա-

ցած ձևով և բառանձատումը կատարվում ե կետից հետո:

գ) Յերկաթագիր տեքստերը չունեն «և» տառը—գրվում ե «աւ», և «փ» տառը չի գործածվում: Բոլորգիր և նոտր գրով գրված հնագույն վորոշ տեքստերում պահպանվում են յերկաթագրի այս ձևերը:

դ) Յերկաթագրի տեքստերի մեծ մասում «լ» տառը վորոշ



բառերում փոխարինվում ե «զ»-ով—այլ՝ այլ, Աղէքսանդրիա>
Ալէքսանդրիա, այդակերպեալ>այլակերպեալ և այլն:

Բոլորաձև յերկաթագիրը և ուղղագիծ յերկաթագիրն ու-
նեն իրարից տարբերվող հետեւյալ հատկանիշերը.—

ա) Բոլորաձև յերկաթագրով գրված տեքստը նոր տողից
սկսելիս, սկզբի առաջին տառը իր մեծության կիսի չափով
տեքստի առաջին գծից դուրս ե գրվում:

բ) Բոլորաձև յերկաթագիրն ունի կլոր ձև, տառասյուները
միացնող գծերը կամարաձևնեն և ուղղագիծ։ Նրանք յերկաթագրի
նման քառակուսի ձևով չեն նստում տողի վրա։

գ) Բոլորաձև յերկաթագիրը բացի միջակետից չգիտե այլ
կետ, ըստ վորում, միջակետն ունի քառակուսի ձև և դրվում ե
տողից վերև։

դ) Բոլորաձև յերկաթագրի տեքստերում հապավված են լի-
նում միայն մի քանի անուններ։

ե) Բոլորաձև յերկաթագիրը մյուս գրերից տարբերվում ե
հետեւյալ տառաձևերում։

ա) «Է»-ի յերկրորդ գիծն իջնում ե մինչև տողը

(թ)

բ) «Ա»-ի առաջին գիծն ավելի յերկար ե և թեք

(թ)

գ) «Վ»-ի առաջին գիծը հավասարվում է յերկրորդին

(թ)

դ) «Կ»-ի յերկրորդ գիծը շատ կարճ ե և թեք

(թ)

ե) «Հ»-ն սկսվում է ի» տառի վերին յերկարությունից

(թ)

նկ. 4.

Շատ ավելի հին ձեռագրերում, որինակ Վ դարի գրչություն
համարված ֆրագմենտում, ինչպես արդեն ասել ենք, տարբեր-
վում են հետեւյալ տառերը.—

«Ա»-ն գրվում ե հունական «Ա»-ի նման

(թ)

«Ծ»-ն վերևի գծում միանում ե

(թ)

«Ե»-ն գրվում ե հունական եպսիլոնի նման

(թ)

նկ. 5

Հայկական հնագույն գրչագրերից Լազարյան ավետարանում
նկատվում ե ուղղագրական հետեւյալ տարբեր ձևերը.—

ա) Ավելագրություն «յ» տառի—յայգեցան, դարձոյ: մատոյ,
հատոյ, գործեալ, կոչեալ, նմալ, սմալ և այլն։

բ) Ավելագրություն «վ» տառի—ովմի, ովմանք, որովգայթ,
Պետրով, քարովզութիւն, բարուովք և այլն։

գ) Հապավումն «ը» տառի—յնթրիս, զնկեր, զնտրեալ, յնչից
և այլն։

դ) Հապավումն «յ» տառի—պպոշ, վկահց, հայնոութիւն, ո-
դորմեցա, հաճեցա, պիտո, զո, միո, արտաքո, յորդու, թղենո
և այլն։

ե) «ե» գրվում ե «է»-ի փոխարեն—թէ, եթէ, ե, եին, խընդ-
րեին, որպես, այնպես, եղեց, ապաքին, պատուեր, զքեն, ի նա-
զարեթէ և այլն։

զ) «է» գրվում ե փոխանակ «ե»-ի—արէգակն, փէսայ, ցէ-
րեկ, եղաւ, եհաս, եթող, եհար, և այլն։

է) «կ»-ի փոխարեն գրվում ե «գ»—անգեան, մանգունք,
յանգողին, ցանգացան և այլն։

ը) «ու» գրվում ե «աւ»-ի փոխարեն—ամովթ, նոքովք, ար-
տասւովք, համբով, համբովել և այլն։

Ուղղագրական այս տարբերվող ձևերն ընդհանուր յերեւյթ-
չեն։ Հին գրչագիրների մեծ մասը պահում են սովորական ուղղա-
գրական ձևերը։

Դժվար ե վորոշել յերկաթագրի գործածության ժամանակը
մեր գրականության մեջ։ Նա պարզ ե, վոր սկսում ե V դարից,
բայց վորտեղ ե նրա վերջին սահմանը—այդ դժվար և ասել։ Մեր
մատենադարանում կրօնական-կանոնական բովանդակությամբ
գրչագրեր են հանգիպում մինչև անդամ XIX դարում, այն ժա-
մանակ, յերբ գործ ածվող գրի հիմնական տեսակը բոլորգիրն եր
հանդիսանում։ Յերկաթագրի ինչպես և մյուս գրերի ժամանակը
վորոշելիս, հնարավոր ե միայն ասել, թե նրանցից վորը ինչ ժա-
մանակաշրջանում ե գրության հիմնական տեսակ հանդիսանում։
Այդ տեսանկյունով յեթե մննք մոտենալու լինենք հարցի քըն-
ությանը, ապա կարելի յե ասել, վոր բոլորձև յերկաթագիրը
կանոնական-կրօնական գրականության մեջ գրի հիմնական տե-
սակն ե հանդիսացել V դարից մինչև IX դարը, ուղղագիծ յեր-
կաթագիրը—IX դարից մինչև XI դարը, մասր յերկաթագիրը
(պատմագիտական բովանդակություն ունեցող գրականության
մեջ, V—XII դ.դ.։


Ա Յ Յ Տ Ե Ա Յ Ֆ Գ

Տ Ե Յ Մ Կ Պ Չ Ժ

Զ Բ Ռ Հ Լ Դ Ճ Ն

Յ Ջ Փ Բ Ը Ե

Նկ. 6.—Բալորձեւ յերկաթագիրի մի շաբք տառեր




Նկ. 7.—1232 թվին գրված յերկաթագիր (№ 777 թ. 51 թ.):

Մանը յերկաթագիրը իր գծագրական առանձնահատկություններով շատ և մոտենում ուղղագիծ յերկաթագրին և փաստորեն նրա փոքրացած տեսակն է։ Այդ տառերը վորոշ բանասերների

ժոտ կոչվում են միջին մեսրոպյան գիր։ Անհրաժեշտ և նշել վոր այդ գրով են գրված մեզ հասած պատմա-գիտական բովանդակություն ունեցող


գրեթե բոլոր հնագույն տեքստերը—թղթի ամենահին ձեռագիրը, Աղաթանագեղոսի պատմության հասգույն ընդորինակության հատվածը (IX—X դ.), Խորենացու պատմության II գըրխի գլխացանկը (X դ.), Յեղիշեցի պատմության պատառիկը (IX դ. ?) և ուրիշները։ Այդ նույն տառերով և գըրված, ինչպես ասել ենք արդեն, կրոնական կանոնական գրականության վորոշ տեքստեր և հատկապես ավետարանների համարը։ Այս տառերի գործածությունն, անկասկած, շատ հսկց և գալիս։ Վ զարի հայկական հարուստ գրականությունը մեր կարծիքով, խոշոր յերկաթագրով բավարարվել չեր կարող և նա պիտի գործ ածած լիներ նաև գրերի այս տեսակը, վորը արագ գրելու և տեղ տնտեսելու տեսակետից ավելի նպատակահարմար եր։

XI—XIII դարերում մեզ հանդիպում են մանը յերկաթագրից բոլորգրին անցնող գրի վորոշ տեսակները։ Այդ գրերի մի շաբք



Նկ. 8.—Մանը յերկաթագիր Գրված 973 թվին
(=Նիբ թվ.) (№ 2684 թ. 245 ա):

տառեր արդեն նոր ձև են առնում: «Ա»-ն սկսում է գործ ածվել
«ա» ձևով, «Յ»—«յ», «Մ»—«մ», «Պ»-ն—«պ» և այլն:




Նկ. 9.—XIII դարի անցման ձեռագիր:

Անցման շրջանի հետաքրքիր գրություն ունի ակադ. Ն. Յե.
Մառի ուսումնասիրած Պիշղեքի գերեզմանատանը գտնվող մի
տապանաքարի հայկական արձանագրություն, վորը նա հրատա-
րակել է «Зап. восточн. отдел. имп. русск. археолог. общ-ва» VIII, 344—349 („Надгробный камень из Семиречии“
վերնագրով): Այսուղ գլխագիր «Ա» տառը սկսել է փոխվել յե-
րեք ճյուղ ունեցող «ա»-ի, բայց գեռ չի կորցրել և յերկաթագրի
վորոշ ձևերը:

6. ԲՈԼՈՐԳԻՐԸ

Յերկաթագրին հետևում է բոլորգիրը: Դժվար ե բացատրել
նրա անունը—նա բոլորովին ել կոր չե, այլ քառանկյունի ձևու-
նի, բայց ինչնու յե կոր կոչվում, դժվար ե ասել: Բոլորգիրը
նմանվում է մեր ներկա տպագրության մեջ գործածված տառե-
րին: Հաճախ նմանությունն այնքան մեծ է, վոր վորոշ ձե-
ռագրեր դժվար են տարբերվում տպագրից:



Նկ. 6.—1272 թվի գրչություն ունեցող բոլորգիր (№ 2563 թ. 378):

Յերկաթագիրը գեղեցկության տեսակետից իր կատարելու-
թյանն է հասնում կիլիկյան դպրոցում: Ձեռագրեր կան մեր մա-
տենադարանում, վորոնց վրա գրիչը տարիներ ե աշխատել, ցան-
կանալով գեղեցիկ ու հավասար ընդորինակել ձեռագիրը:

Բոլորգիրն, ինչպես ասել ենք արդեն, գրության գերիշխող
տեսակն է դառնում կիլիկյան դպրոցում, XII դարում: Ճիշտ այս
ժամանակին ե վերաբերում նրա մասսայական գործածությունը
նույն Արևելյան Հայաստանում: Նա մնում է մեր ձեռագրե-
րում վորպես գերիշխող տառերի տեսակ մինչև XVII դարը:

XV—XVI դարի բոլորագիր ձեռագրերում մեր սովորական
տպագիր տառաձերից տարբեր են գրվել «հ» և «ժ» տառերը:
«Հ»-ն գրվում է «Յ» ձևով, իսկ «Ժ»-ն—«Ժ»:

Հայկական գրականության մեջ, սկսած հնագույն շրջանից, կատարվել են մեծ չափով հապավումներ: Հապավված բառերի թիվը համեմատարար ավելի շատ և հատկապես ուշ շրջանում գրված ձեռագրերում: Վորքան հին և ձեռագիրը, այնքան քիչ են և հապավումները:

Լազարյան կոչված ավետարանում, ինչպես և դրանից առաջ ու դրա ժամանակ գրված տեքստերում, մեզ հանդիպում են հապավված միայն վեց բառ՝ Ած, Յա, Եէմ, Փր, Խեղ և Տր: Մյուս բոլոր բառերը գրվում են առանց հապավման:

XII—XIII դարերի գրչություն ունեցող ձեռագրերում սկսում են շատամալ հապավված բառերի քանակը: Սկսում են հապավվել վորոշ բառերի վերջավորությունները, հատկապես «թիւն» վերջավորությամբ (առաքինութիւն, նեղութեն, աղդարարութք, բոնութեր և այլն): XIV—XV դարերից սկսած, հատկապես բոլորդիր և նոտր գրչություն ունեցող ձեռագրերում, հապավումներն սկսում են արդեն մեծ չափերի համեմ: Նոտր գրչություն ունեցող վորոշ ձեռագրեր են պատահում, վորոնց տեքստում կրճատված են գրեթե բոլոր ձայնավոր տառերը («Պտճռ վրկնիմք ով սրդք իմասթե և որք իմյս էք ցնկցելք ուսանել գիտթի արձնցնել ձեզ արհեստ հմրդթե ոպս կնդնի ձյն ի բրի ուսուցչէ»):

Հատուկ անուններից ամենից շատ հապավվում են հետեւյալ բառերը (տես նկ. 9):

Ի՞ւ - Իւրաէլ

Գրդր - Գրիգոր

Էկս - Էգիպտոս

Արգս - Ասրգիս

Էղմ - Էրուսալէմ

Վրդն - Վարդան

Ահե - Ասհակ

Ջպի - Ջապուհ

Մկն - Մոկսես

Հրկլ - Հերակլ

Դրժ - Դաւիդ

Գգկ - Գագիկ և այլն

Ակ. 9.

Բոլոր և նոտր գրություն ունեցող ձեռագրերում հաճախ հապավվում են հետեւյալ բառերը (տես նկ. 10):

թվ
թւ
թու

թգր

թկմ

պըր

ը

վր

կը

չնկի

ըդ

նըր

նը

բրր

ժ՛

բկ

ամ

ոս

վն

ամնին

դրջլ

հնպկ

յոզ

պոյ

այրն

ըդէմ

նմ

ամ, պամ-ամնայն, պամնայն

բժ

նկ. 10.

Պատահում են բառեր, վորոնք հապավվում են վոչ թե մի-
լից, այլ սկզբից, —կրճատվում են նրանց սկզբի ձայնավոր տա-
ռերը: Այդպիսի բառերից են՝ (տես նկ. 11):

նը - անօրի
 ըկ - օրինակ
 սց - անաց
 նփ - այնչափ
 ղղ - աղաղակ

Նկ. 11.

XVI—XVIII դարերում գրված գրեթե բոլոր ձեռագրերում հապավվում են բառերի վերջավորությունները «թիւն» վերջավորությամբ՝ իր բոլոր ձևերով (գիտութիւն, գիտութեա, գիտութք):

Հապավված բառի վրա դրվում են պատիվ: Գործ ածված պատիվը հիմնականում յերեք ձևի յե՛ (յերկաթագիր ձեռագրերում), և = : Դրանք յերեքն ել դրվում են բառի վրա:

9. ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐԸ

Մաղաղաթ գժվար ձեռք բերելու հանգամանքը վաղուց եւ ստիպել մարդկանց գրչության մեջ հաճախ կրկնվող բառերը փոխարինել պայմանական կարճ նշաններով: Այդ նշանները գրականության մեջ հայտնի յեն նշանագրեր («գաղափարագրերա-իդեօգրաֆիա») անունով: Գաղափարագրեր են մեզ հանդիպում բոլոր ժողովրդների լիզուններով գրված հասպույն ձեռագրերում, վորոնց թվում և հայկականում: Միջին դարերում հայկական ձեռագրերում գործ ածված գաղափարագրերը հավաքվել են առանձին ցուցակներում: Այս ցուցակները սովորաբար վերնագրված են լինում «Նշանագիրք իմաստնոց»: Յերեմի նրանք վերնագրը ված են լինում նաև «Նշանագիրք», «Բացարարութիւն առաջնոց գրոց», «Համառօտագրութիւն», «Մելինութիւն նշանագրաց», «Նշանագիրք հայոց և մեկնութիւնք նոցին» և այլն:

Հայկական գաղափարագրերի քանակը շատ մեծ է: Ձեռագրերում պատահում են «Նշանագիրք իմաստնոց»-ի այնպիսի ցուցակներ, վորոնց մեջ բերված են ավելի քան 300 նշաններ: Գրչության արվեստով զբաղվող հեղինակների համար այս նշանագրերի յուրացումը սովորական մի բան ե համարվել: Մեր մատենագրաբանի թիվ 2371 ձեռագիրը, վորը գրված ե Կաֆայում XIV դարում ու պարունակում ե այն ժամանակ դասավանդվող կարևոր առարկաները, «Նշանագիրք իմաստնոց»-ը շարադրված ե վորպես քերականության որդանական մասը:

Գաղափարագրերի մի զգալի մասը իրենց ձևով համապատասխանում ե գործածվող բառի նշանակությանը: Այդ նմանությունն այնքան ակնբախ ե, վոր վորոշ գիտնականներ յենթագրել են, վոր հայերեն գաղափարագրերը—հայկական հիերոգլիֆներն են: Այդպիսի գաղափարագրերից են, որինակ, հետեւյալ ները (տես նկ. 12):

❖ - ասկրու	■ - ասկրինան
▷ - լուսին	△ - լյառ
▽ - գաւական	+ - իաչ
○ - պրու	□ - լեկու
Ⓐ - աթոռ	▽ - իոր
⌒ - թոչուն	□ - գապանակ
○ - եղզ	

Նկ. 12.

Գաղափարագրերի վորոշ մասը գրվում ե տվյալ բառի առաջին տառով: Այդպիսի գաղափարագրերից են (տես նկ. 13):

Օ - ժով

Ե - ժառանգ

Ի - իան

Ծ - որդու

Հ - Զաքարիա

Փ - Փառաւոր

Վ - վասն

Շ - ըստ

Ռ - թէ

Մ - սոս

Ֆ - Քերոսին

ԴՋ - Ղարապան

նկ. 13.

Վերջապես, կան այնպիսի գաղափարագրեր, վորոնք իրենց ձևով
բօլորովին չեն համապատասխանում տվյալ բառի նշանակությանը:
Այդպիսի գաղափարագրերից կարելի յեն նշել (տես նկ. 14, 15 և 16):

Ճ - Միզնորդ

Հ - աշխարհ

Ճ - երկինք

Ճ - երկիր

Ճ - արեգակ

Ճ - ոսկի

Ճ - ճանապարհ

Ճ - մարդ

Չ - աղբյուր

Վ - եկեղեցի

Մ - ամենայն

Վ - արևելք

Վ - աշուն

Վ - շատար

Վ - սեղան

նկ. 14.

Օ - սահման

Ե - հարաւ

Խ - առեմույր

Կ - հիւսիս

Ջ - արեւելի

Օ - անապաց

Ե - կուապաշոր

Խ - անդասորան


Պ - պարկենչոր

նկ. 14.

Ձեռագրերում գաղափարագրերը գդրծ են ամփամ իրենց նախորդից և
մերօպավորությունով: Որինակ՝ աշխարհ-ի գաղափարագրերը (+ն) - նի,
Վ-ն, Խ-է, Հ-այ, Ա-աւ և այլն: Կամ լրանի գաղափարագրերը (Դ)-
Դի, Վ).

նկ. 15.

Անհրաժեշտ են նշել, վոր «Նշանագիրք իմաստնոց»-ի մեջ մտնում
են վոչ միայն գաղափարագրերը, այլև այն բառերի համառո-
տագրությունները, վորոնք վերջավորություններում են հա-
պաված: Բերում ենք այստեղ մեր մատենադարանի № 3177 ձե-
ռագրի «Նշանագիրք իմաստնոց»-ի 2 եջից բաղկացած նկարը:



նկ. 16. — № 3177, 1ը.-2ա. Ժ. Դ. ԴԱՐ?

10. ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մեղ հասած հայկական տեքստերում ծածկագրերն ամենից շատ հանդիպում են ձեռագրերում և արխիվային նյութերում: Զեռագրերում յեղած ծածկագրերը, մեծ մասամբ, մեկնություններ են (բանալիներ այս կամ այն ծածկագրության տեքստը կարդալու համար), իսկ արխիվում, ընդհակառակը, գլխավորակները ծածկագիր տեքստեր են: Այս մասամբ պիտի բացարել նրանով, վոր հնում սովորաբար ծածկագիր գրել են նամակները և գրությունները, վորոնք մեծ մասամբ սեղ չեն հասել: Մեղ հասած ծածկագիր նամակները և գրությունները XVIII—XIX դարերից են, իսկ այդ շրջանին վերաբերող նյութերը գտնվում են արխիվներում:

Ծածկագրերի շարքն ենք մենք դասում վնչ միայն այն տեքստերը, վորոնք գրվել են տարբեր նշանագրերով, այլև նրանք, վորոնք սովորական հայերեն տառերով և բառերով վորուել իմաստ են հայտնում: Ծածկագրության այս վերջին տեսակն ամենից շատ գործ են ածել հայկական գրիչները: Զեռագրերն ընդորինակող գրիչն իր հիշատակարանում հաճախ ծածկագիր և հայտնում իր անունը կամ գրչության թվականը: Այսպես՝ ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 4163 ձեռագրի գրիչն իր անունը հայտնում ե հետեւյալ վոտանավոր հիշատակարանում:

«Եւ անպիտան գծող սորին,
Որ վեց տառիւ անունս կոչին՝
Դիմ առաջին ու ըէն վերջին,
Որ համարով վերաբերին՝
Տասը հազար բոլորովին,
Եւ վեց հարիւր քսան և վեցին,
Որք միտս ունին՝ նա հաւանին,
Եւ որք չունին՝ նա շվարին»:

Քըչի անունը՝ Քրիգոր ե—«Գ»-ն բառի առջևում, «ը»-ն վերջում և անվան տառերն ըստ իրենց թվական նշանակության հավասար ե տասը հազար վեց հարյուր քսան և վեցի:

ՀԽՍՀ Պետ. մատենադարանի մի այլ ձեռագրում (թիվ 373) ընդորինակող գրիչը ծածկագրով և հայտնում իր ձեռագրերի գրչության թվականը.

«Յինմու ընծայ այս քեզ եղբայր,
Մերոյ նախնեացս վէպ և ճառ,

Մարտիրոսէ յոգնաթշուառ,
Շրջարերեալ թիւ է Միծուռ (թիվ 373):

Ծիծառ թվականը հավասար է $1672\text{-ի } [3'50]+t(20)+\delta(50)+w(1)+n(1000)]+551=1672\text{-ի:}$

Արիստակես Սերաստացին իր ընդորինակած ձեռագրի գըրչության թվականը տալիս ե հետեւյալ ծածկագիր հիշատակարանում. «...զաղափարեցի (ձեռագիրս) ի թուականության հայոց միծաց երկ քառասնից տասանց և եռակի քսանից, նիզակ թուով յաւելից»: Զեռագիրը, ըստ այդ հիշատակարանի ծածկագրության, ընդորինակված ե 1411 թվին — $[(2 \times 40) \times 10] + (3 \times 20) + 1] + 551 = 1411$ թ:..

ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 1864 ձեռագրի հիշատակագիրը իր գրած ձեռագրի թվականն ե համարում «Յանէ զիեկայց», այսինքն՝ $3(300)+w(1)+n(400)+t(7)+q(6)+t(20)+n(5)+q(60)+w(1)+j(300)+551=1651$ թվ:..

XVII դարի հայ գրիչներից նազարեթ անունով մեկն իր վոտանավորի գրչության թվականը, հայտնում ե թե՝ «Եղէ Յակոբ»-ն ե»

«Եւ թուականս ետի տուփ,
թիւն ծածկեալ գրով ամփոփ,
այս թուականն յետ գիրն հուպ,
ես թուականն լեղէ Յակօբ»:


$t(5)+q(90)+t(7)+3(300)+w(1)+q(60)+n(600)+r(2)+551=1616$ թվ:..

Զեռագրի հիշատակարաններում պատահում են ծածկագիր թվականների ավելի պարզ տեսակներ: Այսպես՝ ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 3024 ձեռագրի հիշատակարանում առված ե «Գրեցաւ ի թիւ նեննձձեռնեց»: Յեթե մենք ընդգծված տառերի թվական գումարը տալու լինենք, կստացիր 1687 ($n(400)+n(400)+\delta(100)+\delta(100)+\delta(50)+\delta(50)+\delta(10)+\delta(10)+t(5)+q(3)+q(3)+551=1687$):

Անհամեմատ դժվար ե կարդալ այլ նշանագրերով, ինչպես և հայերեն նշանագրերով, բայց հնչնական այլ նշանակությամբ գըրչված ծածկագրությունը: Նրանց կարդալու համար անպայման պիտի ունենալ բանալի (նրանց մեկնությունը): Ծածկագրության այս տեսակները բավականաչափ զանազան են: Նրանց տեսակների քանակը, ըստ նախնական ուսումնասիրության, 40-ից անց-

Հոռմ ե: Ծածկագրության այս տեսակների մեծ մասի մեկնությունները գտնվում են հայերեն ձեռագրերում: Պարզվում ե, վոր ծածկագրությունը, մյուս առարկաների հետ միասին, դասավանդվել ե հին հայկական դպրոցներում: ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 1869 ձեռագրում, վորն ընդորիխնակված ե 1585 թ. Յեղագրիայում, Անդրիաս գրչի կողմից, տեղափորած ե մի այբբենարան՝ «Գիրք տղայ կարդացնելու է» վերնագրով: Այս այբբենարանից յերեսում ե, վոր աշակերտը տառերն ու թվերը սովորելուց հետո պարտավոր ե սովորել նաև ծածկագրության մի քանի տեսակը: Հայկական ծածկագրության այս տեսակների վերաբերյալ ընդհանուր գաղափար կազմելու համար մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նրանց մի քանիսի վրա.—

1. Երջագիր:— Սովորական հայերեն գրերն են, միայն գըրգում են շուռ տված ձևով: Պահում են իրենց սովորական հնչնական նշանակությունը: Այս ծածկագրով գրված տեքստերը կարդալու համար անհրաժեշտ ե նրանց առջեր պահել հայելին, վորը շուռ և տալիս ուղիղ ձևի (տես նկ. 17):




Նկ. 17.— (№ 1869 թեր 395 ա, Յեղագրիա, Անդրիաս 1585 թ.):

2. Աղվանից գիր:— Դարձյալ հայկական նշանագրերն են, գծագրական զգալի փոփոխություններով: Վորոշ տառերում այդ փոփոխությունն այնքան մեծ ե, վոր առաջին պահին դժվար ե ճանաչել: Յեղել են բանասիրության մեջ մարդիկ, վորոնք հենքելով վերնագրի վրա այս ծածկագրերը համարել են աղվանական նշանագրեր: Սակայն պարզվում ե, վոր նախնական վերնագրերը յեղել ե վոչ թե «աղվանից գիր», այլ «աղավանագիր», վորը ժողովը դական նշանակությամբ հասկացվել ե ծածկագիր: Ծածկագրերի այս տեսակը չպիտի շփոթել ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 7117 ձեռագրում յեղած «աղուանից գրի» հետ, վորը հրատարակել են պրոֆ. Շանիձեն և դոց. Աբովյանի իրենց՝ «Նոր հայտնաբերքած աղվանից այբուբենը» աշխատության մեջ: Վերջինս


ծածկագրություն չե և հիմքեր կան յենթագրելու, վոր նա կարող ե և լինել աղվանից նշանագրերը: Ծածկագիր հանդիսացող «աղվանից գրերը» ավելի ճիշտ—աղավանագրերը, ինչպես ասել ենք վերեւում, պահում են հայկական նշանագրերի տառաձեռը (տես նկ. 18):

Ժամկագիր „աղվանից գրի նմուշը հետևյալն է“:
«Նյու և աղուանից այբուբենն»



Նկ. 18.— (№ 3124 թեր 11 թ. XVIII դ.)

3. Գծագրվեագրեր:— Հոռմ սա ամենաշատ կործածական ծածկագիրն ե հանդիսացել: Ուղղագիծ սյուների և նրանց մոտ



Նկ. 19.— (Հայաս, Պետ. Կենտր. ձեռագ. Մատենադարան № 1869 թեր 329 ա՝ գրված 1585 թ. Անդրիաս գրիչ, Յեղագրիա):


գրված կետերի քանակով վորոշվում ե նրա համապատասխան տառանիշը: «Ա»-ից մինչև «Ժ»-ն գրվում ե մի գծով, «Ժ»-ից—«Ճ»-ն՝ յերկու գծով, «Ճ»-ից—«Շ»-ն—յերեք գծով, իսկ «Շ»-ից հետո՝ չորս գծով: ՀԽՍՀ Պետ. մատենադարանի ձեռագրերում պատահում են այնպիսի ընդորինակություններ, ուր գրիչն իր անունը այս ծածկագրով ե հայտնում: Այսպես՝ թիվ 2001 ձեռագրում (թիվ 139 թ.), ընդորինակված XIV դարում, Գրիգորիս անունով մի գրիչ իր անունը հայտնում ե այս ծածկագրով: Գծավոր կետագրերի այլուրնել կազմված ե հետեւյալ նշանագրերից (տես նկ. 19):

Այդ նույն ծածկագրով մի հիշատակություն ե գրված նախկին Լազարյան ճեմարանին պատկանող մի գրչագրում («Յիշատակ է քարոզզիրքս Սրապիսն վարդապետին») և ներքեւ տված և այսպիսի մի գոտանավոր՝

«Եթէ դպիր ես նայ կարդայ,
Զէ նա վկիդ տուր և հազայ,
Մի մեղադրիր ինձ ի կամայ,
Բանս արուեստիւ է միդ արայ»:

(Հրատ. Ն. Մատի—«Հանդ. ամս» 1892 թ., եջ 52):

4. Գավազանագրեր:— Շատ քիչ են տարբերվում գծավոր կետագրերից, Տարբերությունը գծեկների մեջ ե—այստեղ գծերի փոխարեն զրվում են զանազան տեսակի գավազանաձև ցալիկներ, ուստի և կոչվում ե գավազանագրիք: «Ա»-ից մինչև «Ժ»-ն գործ ե



Նկ. 20.— (№ 2001, թիվ 223, գրիչը—Թոմաս, XIV դար):

ածվում մի կետ, «Ժ»-ից մինչև «Ճ»-ն՝ յերկու կետ, «Ճ»-ից—«Շ»-ն՝ յերեք կետ, «Շ»-ից հետո՝ չորս կետ: Այս ծածկագրի այլուրնել գրվում ե հետեւյալ ձևով (տես նկ. 20):

5. Յեղբայրագրեր:— Ծածկագրերի այս տեսակը կոչվում ե նաև փոխարինագրեր, վորովհետեւ այլուրենի մի տառը իր հընչ-նական նշանակությամբ փոխարինում ե մյուսին: Այլուրենը բաժանվում է յերկու մասի—«Ա»-ից մինչև «Շ» և «Ճ»-ից մինչև «Ք», և համարական կարգով զրվում իրար գույգանեռ՝ փոխարինելով իրար իրենց հնչնական նշանակությամբ (տես նկ. 21):

ա	բ	գ	դ	է	ւ	ւ	է	ւ	թ
Ճ	Ծ	Ջ	Ն	Չ	Ն	Չ	Ր	Չ	Ջ
Ժ	Ւ	Լ	Խ	Շ	Կ	Ր	Ճ	Շ	Ղ
Շ	Ա	Վ	Մ	Ր	Շ	Լ	Կ	Շ	Ֆ

Նկ. 21.

«Աղիւսակս այսպես իմացիր, այբ որ պիտանայ ճէ. գրէ, ճէ որ պիտանայ այբ, գրէ: Ժէ որ պիտանայ, ըռայ գրէ. ըռայ որ պիտանայ ժէ. գրէ և այլն ի կարգին գնայ»:

6. Միատառ ծածկագրեր:— Վերցվում ե այս ծածկագրության մեջ «ա» տառը և նրա վերեկց կամ ներքեկց դնելով կետեր, պատիվներ և կլոր նշաններ տալիս են իրենց ցանկացած տառի հնչյունը (տես նկ. 22):

Ծածկագրի այս տեսակն ամենից քիչ ե գործածական: Բավական ե վորեն գծիկ մոռացվի գրվեր կամ ճիշտ չգրվի՝ նրանով գրված տեքստն անհնար կլինի կարգաւ:

7. Խմբագործ փոխարինագրեր:— Ծածկագրության այս տեսակը փոխարինագրերի ավելի բարդացված տեսակն ե: Այլուրենի առանձին տառերը փոխարինվում են հայկական այլուրենի յերկու, յերեք այլ տառերով: Մի տառով միայն գրվում ե «ա» տառը (տես նկ. 23):

8. Ծածկագրի բականական:— Ծածկագրության այս տեսակի բանակն պահպան ե Սնդըրիս գրչի վերև հիշատակված դասագրքում: Աս գործ ե ածվել միայն թվականների համար: Իր բուժանդակությամբ ծածկագրության այս տեսակը շատ պարզ ե:

Մեկից մինչև իննը գրվում ե հայկական այբուբենի տառերով՝ իրենց սովորական թվական նշանակությամբ, տասից մինչև հարյուրը գրվում ե «ա»-ից—«ժ» տառերով՝ մի զերո ավելացրած, հարյուրից—հաղարը՝ նույն տառերը յերկու զերոյով, և վերջապես, հաղարից—ութ հաղարը՝ դարձյալ նույն տառերը՝ յերեք զերոյով:

Ա	Ա	Ա	Ա	Ա
ամենակալ	արժանաւոր	ապաւէն	անդադար	աղօթ
Ա	Ա	Ա	Ա	Ա
ամբարիշչի	ամբարփաւան	ապաշաւ	անըսգամ	անիրաւ
Ա	Ա	Ա	Ա	Ա
անոխակալ	անուան	արջակնա	ամբարհաւած	ակամա
Ա	Ա	Ա	Ա	Ա
անդրանիկ	արնգակն	ապրնցոյ	այնպէս	այսպէս
Ա	Ա	Ա	Ա	Ա
անդամալուժ	աղջամնող	ապականացոյ	այնորիկ	այսորիկ
Ա	Ա	Ա	Ա	Ա
արժանի	անջրե	արժայ	ահեղ	անարժան

Նկ. 22.—Այս է նշնգիր № 1465 թերթ 13 ա—29 բ, 1628 (?) նազար գրչի(նույն քեռագրում այս ծածկագրով գրված է Հովհաննես Վոսկերերանի Հապատամբը)՝

Սրանցով, իհարկե. չեն վերջանում հայկական մատենագրության մեջ գործ ածված ծածկագրության տեսակները: Արխիվում կան Աշտարակեցու և այլ անձնագործությունների մի շարք ծածկագրի նամակները, վորոնց հետ ծանոթանալ ցանկացողը պիտի կարդա այդ տեքստերի վերաբերյալ մասնագիտական ուսումնամիրություններ:

Ի միջի այլոց, մենք կանգ չառանք նաև հայկական բժշկա-

րաններում գործ ածվող ծածկագրերի վրա: Ինչպես վոր այժմ առանձին դեղերի համար ուցեպտներ են գրվում լատիներեն լեզվով, վորը հասկանալի չի մասնագետ չեղող անձնագորության համար, այսպես ել նույն առանձին դեղերի ուցեպտները հաճախ գրում եյին ծածկագիր, վորպեսզի հասկանալի չլինի ամեն մի սովորական ընթերցողի համար: Նման ձևով ծածկագիր տեքստեր են պատահում ալքիմիական բովանդակություն ունեցող ձեռագրերում:

11. ԹՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ:

Մեր ներկա թվերի գործածությունը հայկական գրության մեջ նոր է: Նա XVII—XVIII դարերից դենը չի անցնում: Հայ մատենագրության մեջ դրանից առաջ վորպես թվեր գործ են ածվել հայկական տառերը: Համարական կարգով հայկական այբուբենի «ա»-ից մինչև «ժ» տառը հանդիսացել են միավորներ, «ժ»-ից մինչև «Ճ»-ն—տառնավորներ, «Ճ»-ից մինչև «Շ»-ն—հարյուրավորներ և «Շ»-ից հետո յեղող տառերը—հաղարավորներ: Հայկական այբուբենի առանձին տառերը մեր մատենագրության մեջ գործ են ածված հետեւյալ նշանակությամբ:

$w=1$	$d=10$	$\delta=100$	$n=1000$
$p=2$	$b=20$	$m=200$	$u=2000$
$q=3$	$l=30$	$j=300$	$q=3000$
$r=4$	$h=40$	$z=400$	$s=4000$
$k=5$	$\sigma=50$	$v=500$	$r=5000$
$\eta=6$	$l=60$	$w=600$	$g=6000$
$\xi=7$	$\zeta=70$	$x=700$	$t=7000$
$\ell=8$	$\delta=80$	$\eta=800$	$\phi=8000$
$\beta=9$	$\eta=90$	$\varrho=900$	$\varphi=9000$

1624 թվականը հայկական տառերով գրվում է—ՌՈՒԴԻ, 9978-ը—ՔԶՀԸ, 3282-ը—ՎՄԶԲ, 1999-ը ՌԶԴԹ և այլն:

Զերոյի համար առանձին նշան գոյություն չի ունեցել: Թվերի մեջ կամ վերջում պահանջվող զերոն հասկացվել ե նախորդ տառի թվական նշանակության հետ միասին: Այսպես՝ 1080 թվականը գրվել ե ՌԶ տառերով, 8002-ը—ՓԲ, 1608-ը—ՌՈՒ և այլն:

Հաղարավորներից բարձր թվերը հաշվել են բյուրերով: Բյուր ե համարվել տառը հաղարը: Հաշվումները հեշտացնելու համար բյուրի համար գործ են ածել և նշանը: Դա հնարավորու-

թյուն և ստեղծել առանց դժվարության միլիոնների, տամնյակ միլիոնների հաշիվներ անել: Բյուրի (չորս գերոյի) այդ նշանը բազմաթիվ տեղերում գործածված ենք տեսնում VII գարի մաթեմատիկոս (համարող) Անանիա Շիրակացու կողմից՝ իր նորերս մեր մատենագարանում հայտնաբերված թվաբանության դասագրքում: Բյուրի համար գործ ածված այդ նշանը հայկական տառի վրա դնելիս, չորս գերոյով մեծանում է նրա թվական նշանակությունը: Այդ հաշվով հայկական այրուբենի տառերը ստանում են հետեւյալ թվական նշանակությունը:—

ω' = 10,000	δ' = 100,000	λ' = 1 միլիոն	n' = 10	միլիոն
ρ' = 20,000	τ' = 200,000	ς' = 2 ---	ω' = 20	---
φ' = 30,000	ζ' = 300,000	ς' = 3 ---	ψ' = 30	---
γ' = 40,000	μ' = 400,000	ν' = 4 ---	χ' = 40	---
ϵ' = 50,000	ς' = 500,000	γ' = 5 ---	ρ' = 50	---
ψ' = 60,000	ζ' = 600,000	η' = 6 ---	ψ' = 60	---
ξ' = 70,000	μ' = 700,000	χ' = 7 ---	ι' = 70	---
ζ' = 80,000	ς' = 800,000	ψ' = 8 ---	φ' = 80	---
ρ' = 90,000	γ' = 900,000	η' = 9 ---	ι' = 90	---

Որինակ 6,874 528-ը գրվել է հայեր դառանիշներով
ՌՀԷԿՄԴ ԻԼ. 80024-ը - ԾԻՇ. 1,001,000-ը - ՌԴ և այն:

Նկ. 23.

Թվական նշանակությամբ գործ ածված տառերը մյուսներից տարբերելու համար, ձեռագրերում, ինչպես և վիմական արձանագրությունների մեջ, սկզբից և վերջից գրել են միջակետ կամ վերջակետ: Բացի այս, թվական նշանակությամբ գործ ածված տառերի վրա դրվել են պատճեններ: Որինակ «Յամի ՌՅԶԹ»: ամսոյ իմ: լուսինն խաւարեցաւ», «ի թուականութեան հայոց ՌՅԶԹ»: եղե մահ տարածամ», «Արշակ թագաւորեաց ԽԲ. ամ և Ե. ամիս» և այն:

Հայկական վորոշ ձեռագրերում, հատկապես նոտար գրչություն ունեցող ձեռագրերում, պատառում են գեպքեր, յերբ խախտվում են թվական գործածվելու ներկա կանոնները: Այսպես, յերբեմն հազարավոր կամ հարյուրավոր թվերի համար գործածվում են վոչ թե տվյալներ, այլ մնում են միավոր թվանշանում: Այդ գեպքում «ի»-ն վոչ թե 20-ի յե հավասար, այլ՝ 11-ի, «լ»-ն վոչ թե 30-ի, այլ՝ 12-ի (այդպես և Մլքէ թագուհու կոչված ձեռագրում): XVII և XVIII դարերում գրված նոտագրի ձեռագրերում պատառում են գեպքեր, յերբ հայկական թվանշանից տառերի հետ սկսում են գործ ածել գերոն (որինակ՝ Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրության մեջ): Այստեղ 1680-ը գրվել է ՌՈՒԶ. 1025-ը՝ ՌՅՅԻՆ ձևով:

Հայկական գրչագրերում մեղ հանդիպում են նաև մի համարիչ ունեցող պարզ կոտորակների գործածություն: Նման կոտորակներ մեղ համապատասխան ծիրակացու թվաբանության խընդուագրքում և Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի մեջ: Կոտորակի նշանակությամբ գործածված թվանշանի վրա դրվում ե թափի նման մի նշան (շատ նման բյուրի նշանին) այն տարբերությամբ, վոր այդ նշանը դրվում ե վոչ թե տառի հետեւից, այլ առջևից: Ծիրակացու թվաբանության խնդիրներից մեկի պատասխանը, —վորը հավասար ե յեղել $\frac{7}{11}$ -ի, —գրվել ե —Ե, /Ե/ /Ի/ /ԽԴ, մի ուրիշը $\frac{9}{11}$ -ը գրվել ե Թ, /ԺԱ: Կեսի համար յերեմն գործ են ածել լատինական և տառի նման մի նշան: «Յեռոն...ծայրն ի ներքոյ գայ ի յովկիանոս առաւել քան զայլ երկիր՝ մասունա երիս և օր լինի ասպարէզք հազար եւթն հարիւր և յիսունք:

Տարեթիվը հայկական գրության մեջ գործ ե ածել հայկական թվականով, վորը, ինչպես հայտնի յե, 551-ով պակաս և մեր ներկա գործածվող թվականից: Հայկական թվականից մեր թվականը հաշիվելու համար տնհրաժեշտ ե ավելացնել 551 թիվ: Այսպես՝ ՌՅՅԻՆ հայկական թվականը հավասար ե (1124+551) 1675-ի, ՆԼ թվականը հավասար ե 981-ի (430+551), ՈՒ թվականը հավասար ե 1155 (604+551) և այլն:

Հայկական մատենագրության մեջ ամիսների ամսունները գործ են ածում վոչ թե ներկա ամիսներով, այլ հայկականով, վորը տարեկան 13-ն ե: Այդ ամիսներից 12-ն ունեցել են 30-ական որ, իսկ վերջինը՝ 5 որ:

1. Նաւասարդ՝ 30 որ,
2. Հոռի՝ 30 որ,
3. Սահմի՝ 30 որ,

- | | |
|-------------|---------|
| 4. Տրէ | -30 որ, |
| 5. Քաղոց | -30 որ, |
| 6. Արաց | -30 որ, |
| 7. Մեհեկի | -30 որ, |
| 8. Արեգ | -30 որ, |
| 9. Աճեկի | -30 որ, |
| 10. Մարերի | -30 որ, |
| 11. Մարգաց | -30 որ, |
| 12. Հրոտից | -30 որ, |
| 13. Աւելիաց | -5 որ: |

XIII դարում Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարը կազմվելուց հետո սկսվեց արդեն կատարվել տոմարական ավելի ճիշտ հաշիվ՝ հայկական ամսաթվերը հոռմեականին համապատասխանելու տեսակետից։ Հայկական նոր տարվա սկիզբը (անշարժ տոմարի կազմելուց հետո) հավասար են մեր ներկա ոգոստոսի 1-ին (հին տոմարով)։ Մեր ներկա հաշվով նոր տարվա սկիզբը (հունիսն տոմարով) հավասար են հայկական քաղոց տևման 24-ին։

12. ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Ամենաքիչ կետադրություն ունեցող տեքստերը—բոլորաձեւ յերկաթագրով գրված տեքստերն են։ Այստեղ մեզ պատահում են միայն միջակետը, պատիվը և չակերպը։ Ուրիշ կետեր չկան այնտեղ։ Միջակետն այդ տեքստերում գործ են ածվում նաև վերջակետի նշանակությամբ և դրվում են սովորաբար առղից վերեւ։ Հնագույն տեքստերում նա վոչ թե կլոր են, այլ ունի քառանուկյունի ձև։ (☞) Չակերպը գործ են ածվում ուրիշի խոսքերը բերելու ժամանակ, ըստ վորում, նա դրվում են վոչ թե տեքստի առջեվից և վերջից միայն, ինչպես այժմ, այլ բերված տեքստի բոլոր տողերի միայն առջևից։ Նա ունի լատինական Տ տառի ձևը։ Պատիվը գործ են ածվում հապավումների ժամանակ, իսկ բոլոր ձեռք յերկաթագիր գրչագրերում, ինչպես ասել ենք արդեն, հաւածել լինում միայն վեց բառ—Յս, Ած, Քս, Եղմ, Իէղ և Տր։ Բոլորաձեւ յերկաթագրով գրված տեքստերը չունեն վերջակետ (կրկնակետ), հարցական նշան, ստորակետ և հետազուր գործ ածվող մյուս կետերը։

Մոտավորապես տասերորդ դարից հետո գրված ձեռագրերում սկսվում են արդեն ամենուրեք գործ ածվել վերջակետը։ Հնա-

գույն գրչագրերի մեծ մասում նա պահպանվում են միջակետի քառանկյունի ձևով (☞): Գրչագրերում մեկ մեկ պատահում են վերջակետը ասորականի նման յերեք կետով (☞): Վորոշ ձեռագրերում վերջին կետը գրվում են կոր գծով (☞): XII, XIII և ուշ դարերի ձեռագրերում տեքստերի ավարտական նշանը գրվում են յերկու կետերով և յերկու, յերեք և ավելի գծիկներով (☞: ~~~: ~~~: ~~~: ~~~: ~~~): Մոտավորապես XI դարից հետո սկսվում են գործ ածվել ստորակետը և տառաբաժանման նշանը։

Մինչև XIII դ. գրված ձեռագրերում գրեթե մեզ չեն հանդիպում գործածված առղադարձման նշանը—յենթամնան։ Մեզ հայտնի հնագույն գրչագրերից մեկը, ուր հանդիպում ենք տողադարձման նշանի—Մովսես Կաղանկատվացու 1289 թ. ընդորինակությունն են։ Տողադարձման նշանը դրվում են վոչ թե վերջացող տողի վրա, այլ առղի վերևում։

Սկսած մոտավորապես XI-	***	***	***	***
XII դարերի գրչագրերից վերանագրերը տեքստից բաժանելու համար սկսում են վերնագրերն ընդգծել։ Ընդդումը կատարվում են վոչ թե գծով, այլ կետերով։	***	***	***	***
Մեզ հայտնի յեն կետերով ընդգծելու հետեւյալ ձևերը։	***	***	***	***

Նկ. 24.

Հնագույն տեքստերում այս կետերն ու գծիկները գրվում են վերնագրի վերեկից, իսկ ուշ շրջանում այն տեղափոխում են ներքեւ։


Բութի գործածությունը յերեսում են XII—XIII դարերում։ Կիլիկյան գրչությամբ կան մի շարք ձեռագրեր, վորտեղ գործ են ածվել բութը։ Նա չի տարբերվում իր ներկա ձերց և գրվել են տողից վերև։

Բոլորգիր ձեռագրերում (մոտավորապես XII դարից) սկսվում են նաև թավի գործածությունը ✕/ \ ձևով։ Նա դրվում են բառեր վրա «աւ» հնչյունը պահելու «ու»-ի հնչման փոփոխության դեպքում (իւ/անէ, հարազատաւ, ի թ/շուականութեան հայոց և այն): Ավելի ուշ շրջանում «աւ»-ի վրա գրվում են ∞ նշան «օ» հնչելու համար։

Մոտավորապես XIII—XIV դարերում են գրանից հետո գըրված ձեռագրերում հանդիպում են այժմ մեզ հայտնի և գործածվող գրեթե բոլոր կետերը։ Վորոշ հայ քերականներ և գրչու-

թյան արվեստի կուրս կազմող հեղինակներ, իրենց աշխատությունների մեջ սկսում են հատուկ գլուխներ հատկացնել կետադրությանը, աշխատում են վորոշ կանոնների յենթարկել գրանց: Կետադրությանը վերաբերող գլուխները նրանց այդ աշխատությունների մեջ վերնազրված են լինում՝ «վասն ոլորակի», «վասն կէտի», «վասն վերծանութեան»:

Կետադրության գործածությունը մեծ դարդացման և հասնում հատկապես այն տեքստերում, վորոնք յերգեցողության համար են գրված՝ տաղարաններում, խազգրքերում, գանձարաններում, շաբականներում և այլն: Այստեղ արդեն նրանք սկսում են ստանալ այլ նշանակություն, նրանք սկսում են նոտաների գեր



Նկ. 25.—97. ԵԶՄ. № 759. 67 ա 1278 թ.

ապաթարց (՝), ենթամայ (՞), ստորատ (,), իսկ ըստ տրոհութեան որ է ըստ որոշութեան՝ որ դատէ և ընտրէ գրան ի բանէ

կատարել: Բառի վրա դրված գծի բարձրացման կամ յերկարացման համաձայն ցանկացել և ասել նրա հեղինակը, վոր անհրաժեշտ ե բարձրացնել յերկարացնել ձայնը և այլն:

Հետաքրքիր հիշատակություն ունի հայկական կետադրության վերաբերյալ Յեսայի նշեցին: Նա հետեւյալն է ասում. «Այս լինի ըստ տասն արուեստի առողանութեանցն, որպէս և եղեալ է ըստ գանազան որակացն ձևացություններու թիւն. շեշտ (՝), բութ (՝), պարոյկ (՞), յերկար (՞), սուղ (՞), թաւ (՞), սոսկ (՞),

և զտուն ի տանէ, և ոչ ընդ միմեանս խառնելով յընթեռուն դայլեայլ խորհուրդն»:

XVII դարում գրված վորոշ ձեռագրերում ավարտական կետը նշանակվում է չորս թեք գծիկներով (՝, ՞, ՞, ՞): Տեքստերում մոռացված նախադասությունները լուսանցքում լրացնելիս գործ են ածվում լի Բ այս նշանները: Նոր ծագում ունի (՞) հարցական նշանը: Հունական աղբեցության տակ, սկսած հնագույն շըրջանից, գործ են ածվում յերկու տեսակ շեղ գծիկներ՝ բառերի վրա, վորոնց նպատակը ձայնավորների յերկարացումն ե—(՞): Յերբեմն պատահում են տեքստեր, վորոնց բառերի մեծ մասի վրա դրված են լինում այդ նշանները:

Կետադրության նշանները իրենց վողջ բազմազանությամբ խոշոր զարգացման են հասնում շարականներում և խազգրքերում: Այստեղ նրանք փաստորեն սկսում են նոտաների գերկատարել:

13. ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական մանրանկարչությունը պալեոգրաֆիայի մեր ներկա կուրսում հետաքրքրում է միայն այն չափով, վոր չափով նա ոգնում է մեղ պարզելու այս կամ այն ձեռագրի գրչության վայրը, գրելու ժամանակը և վորոշ գեպքում նաև՝ հեղինակը: Հայկական մանրանկարչության յուրաքանչյուր դպրոց, ինչպես հայտնի յի, ունի իր վորոշ առանձնահատկությունները, վորի հիման վրա կարելի յե ասել թե այս ձեռագիրն այսինչ դպրոցի գործե, նկարված և այսինչ վայրում, այսինչ ժամանակ: Այդ առանձնահատկություններն ել հենց ոգնում են մեզ ձեռագրերի ճիշտ ընութագրման գործում: Այդ ողնությունը մեծ և հատկապես հայկական զարդանկարված այն ձեռագրերի համար, վորոնք չունեն հիշատակարան:

Մանրանկարչությունը, պետք է խոստովանել հայկական արվեստի պատմության ամենաշմշակված շրջաններից մեկն ե: Վհչ միայն մենք մինչեւ այժմ չունենք առանձին նկարիչների գործերի գիտական խորն ուսումնասիրությունը, այլև չի ճշշտված թե Հայաստանում ինչ ինչ շկոլաներ են գոյություն ունեցել: Խոսվել ե մեզ մոտ միայն Խիզանի շկոլայի մասին և մասմբ՝ Կիլիկիայի, համարելով վերջինս «արքունական-ակադեմիական», վորն արմատորեն սխալ ե և շփոթվում է այստեղ արքունիքի պատվիրատու թագավորը կամ այլ ֆեոդալը՝ աշխա-

տանքն անմիջապես կատարող, ստեղծագործող հասարակ նկարիչ հետ։ Մեզ մոտ, փաստուն, մինչև այժմ ստվերի տակ են մնացել մանրանկարչական որիգինալ ու բարձր արժեքներ տվող մի շարք դպրոցներ՝ Տաթև, Հաղբատ և ուրիշները։ Հավակնություն չունենալով մեր ներկա կուբում մշակել մանրանկարչության դպրոցների հարցն ընդհանրապես, վորովնետեղ դա մասնագիտական այլ հարց և և հայկական մանրանկարչությամբ զբաղվող մասնագիտներին ե վերաբերում, սակայն այնքան, վորքան ձեռագրի բնութագրման համար անհրաժեշտ ե նախնական ծանոթություն տալ հայկական մանրանկարչության վերաբերյալ մենք անհրաժեշտ ենք համարում շատ կարճ կանդ առնել հայկական մանրանկարչության մի քանի դպրոցների վրա։

Հայկական ձեռագրերում մեզ հասած ամենահին մանրանկարչական նմուշը—մեր մատենադարանի կրկնագիր մաշտոցի մեջ մի յերեսի վրա մնացած խորանն ե։ Ձեռագիրը լվացվել ե XIII դարում վոմն Հովհաննեսի կողմից և հետո գրվել մաշտոցի տեքստը։ Ձեռագրի նախնական տեքստը գրված ե յեղեւ մեր կարծիքով, VIII դարից առաջ։ Այդ նույն ժամանակին ե վերաբերում նաև մանրանկարչական մեծ արժեք ներկայացնող խորանը։ Այդ նույն խորանի նկարչության շկոլային են պատկանում նաև մեր մատենադարանի թիվ 275 ձեռագրի զարդարները, վորոնք նկարված են 1071 թվին։

Մանրանկարչական այս շկոլային հատուկ են—մյուս գույների համեմատությամբ, կապույտ և կանաչ գույների գործածության գերակշռությունը՝ իրար հետեւող մի շարք կիսախորանների նկարումը, խաչի, ինչպես և քրիստոնեական այլ զարդարությունների բացարձակ բացակայությունը, խորանների միջև առանձին շրջանակներում գիշատիչ կենդանիների (առյուծ, բազե, արծիվ և այլն) նկարումը, վարդերի փունջերով խորանների զարդարումը և այլն։

Հայպույն հայկական մանրանկարչության նմուշներ են հանդիսանում նաև մեր մատենադարանի «փոսկը» կոչվող ավետարանի (998 թվից) և Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի «Մլքէ թագուհու» ավետարանի (909 թվից) մանրանկարչությունը։ Այս ձեռագրերի մանրանկարչությունը, կրկնագիր մաշտոցի մանրանկարչության համեմատությամբ, միանգամայն այլ դպրոցի պատկանող գործ ե։ Այստեղ արդեն վորոշ ազդեցություն ունի բյուզանդական քրիստոնեական մանրանկարչությունը։ Այս շկոլայի մանրանկարչությանը հատուկ է նկարների շքեղությունը, մանրանկարչությունը և այլն։

մանրանկարչություններ, պայծառ գույներով սյունազարդ խորանների նկարում, տիպերի ճիշտ արտահայտում, հազուսաների ծալքերի վարպետ նկարում և այլն։

Հայկական մանրանկարչությունը մեծ չափով զարգանում և ծաղկում է կիլիկյան դպրոցում։ Այստեղ արդեն հանդես են գալիս մի շարք տաղանդավոր նկարիչներ (Ռուլին, Սարգիս Պիծակ և ուրիշները), վորոնք խոշոր գործ են կատարում հայկական մանրանկարչության զարգացման գործում։ Կարեոր և նշել վոր այս դպրոցի ստեղծագործության լավագույն մի շարք նմուշներ հասել են մեզ և այժմ մենք համարավորություն ունենք տալ կոնկրետ այդ դպրոցի մանրանկարչության համապատասխան արժեքավորումը։


Կիլիկյան դպրոցի մանրանկարչությունը, ինչպես ասել ենք արդեն, սխալ և արքունական-ակաղեմիական համարելը։ Այդ դպրոցի մանրանկարչություն ստեղծագործողը վճռ թե արքունիքում նստողներից ե, այլ ցածր խավի նկարիչներից, վորն աշխատել և առաջինների պատվերով։

Կիլիկյան դպրոցի մանրանկարչությանը, ամենից առաջ, հատուկ է նկարչական բարդ կոմպոզիցիա։ Նկարում են որինակ վճռ միայն մարդկանց, իրենց գրասեղանի առաջ, ինչպես հայկական մի շարք այլ դպրոցներումն ե, այլև տալիս են այդ մարդու հեռու շրջապատը—վանքեր, պալատներ և այլն։ Կիլիկյան մանրանկարչության մեջ մեծ չափով գործ են ածում վոսկի։ Յերեքն ամբողջ նկարի շրջանակի աղատ յեղած ֆոնը զարդարում են վոսկով։ Մարդկանց գեմքերին տալիս են նրանց հոգեկան ապրությունը։ Անա ձեզ մի գրիչ, վորը ձեռքը ճակատին գրած նայում է հեռուն և մտածում, տիրությունը նրա գեմքից յերեւակ։ Լուսանցագրպությունների մեջ սկսում են գործ ածել թունագրեր, ծաղկագրեր, գաղանագրեր, և այլն։ Այս շկոլան հայկական մանրանկարչության մեջ գերիշխող է հանդիսանում XII—XIII դարերում։

Մեր մանրանկարչական կարեվոր դպրոցներից և Ցարեվը—Մանրանկարչական այս դպրոցը զարգանում է հատկապես XIV—XV դարերում։ Նրա բնորոշ հատկանիշներից ե — խտացած, հաստ շարիմներով նկարչությունը։ Մի քանի գծերով հաջողվում է նրանց, որինակ, տալ ալեղարդ ծերունու դիմագիծը, Յերեք-չորս գծով շատ հաջող ձևով արվում է գլխարկը և այլն։ Խորանների

վերեկց շատ են զարդարում թռչուններով—աքաղաղներ, կաքավաներ, սիրամարգներ և այլն:

Հայկական մանրանկարչության լավագույն և որիգինալ դըպարոցներից է Խիզանը: Գույնների մեջ գերակշռում են բաց կարմիր գույնը: Կատարվում են շատ բարդ կոմպոզիցիաներ: Մարդիկ՝ կենդանիները նկարվում են վոչ թե սառած դրությամբ, այլ վորոշ գործողության մեջ: Ահա ձեզ յերկու աքաղաղ խորանի վրա, վորոնք պատրաստվում են կուկելու, մի այլ տեղ արագիլ կանգնած և մի վոտքի վրա՝ բերնում բռնած ոճ. յեղջերուն նկատել ե



Նկ. 26.-ա.—Հայկական մանրանկարչության նմուշ: Են գործադրվում կծիկի նման իրար փաթաթված գարդարանքներ: Գերակշռում է նաև տերևաձեկ զարդարանքը: Այս շկոլայի ծաղկման շրջանը—XIII—XIV դարերն են:

Յեկ, վերջապես,
Զուլայի ըկուն:—Այս շկոլան սկզբում զարգանում է Հին Զուլայում, Նախիջևանում, իսկ Շահաբասի գաղթեցումից հետո շարունակում և իր զարդացումը Պարսկաստանում: Ճիշտ Զուլայի որինակով ձեռագրեր են սկսվում գրվել ու նկարվել նաև Պոլսում և այլ վայրերում: Զուլայի շկոլայի մարդարչությանը հատուկ է նկարչության անչափ շքեղությունը:



վոսկով և վառվոռւն այլ գույններով: Նկարներ ու գարդադրություններ կարելի յեն հանդիպել ձեռագրի գրեթե ամեն մի եցի վրա: Կարեւոր և շեշտել այն հանգամանքը, վոր այս շկոլայի, ինչպես և հայկական մյուս բոլոր շկոլաների, ամենազրական կողմնայն ե, վոր նրանք թեկուզ հաղար, յերկու հազար եւ նկար նկարելիս լինեն մի ձեռագրում, յերբեք չեն կրկնում մյուս եցում նկարածը: Զուլայի շկոլան ունի սակայն մի թերություն. նրա մեջ քիչ ե որեգինալությունը: Այս մանրանկարչության հիմքը հանդիսանում է Կիլիկյան, Խիզանի մանրանկարչությունը: Ոգտվել են նաև յեկոպական մանրանկարչությունից: Այս շկոլայի ծաղկման շրջանն է XVI—XVII դարերը:

Սրանով չի վերջանում հայկական մանրանկարչության առանձին շկոլաների թվարկումը: Մանրանկարչական բարձր արժեքի ձեռագրեր են հասել մեզ Բաղեցից, Սանահինից, Կաֆայից և հայկական գրչության այլ կենտրոններից. սակայն այս վողջ հարստությունը, ինչպես ասել ենք արգեն, մասնագիտական ուսումնասիրության դեռ չի յենթարկված:

14. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵԿ ԱՂԱՎԱՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Հայկական ձեռագրերում կատարված փոփոխությունների և աղավաղումների յերեք հիմնական տեսակը կարելի յեն նշել—ընդմիջարկություններ (ինտերպոլեացիա), հապավումներ և գրչական սխաններ: Նախնական տեքստերի մեծ մասի աղավաղման պատճառը, ինչպես պարզվում է, ընդորինակող գրչի անուշագրության և կամ թե չե ուշ շրջանում նպատակադրված ձեռվ կատարված խմբագրության հետևանքով է:

ա) Ընդմիջարկություն:— Ընդմիջարկություն կամ ինտերպոլացիա յեն կոչվում նախնական տեքստում ընդորինակող գրիչների կատարած այն լրացումները կամ մեկնությունները, վորոնք արտագրվում են նախնական տեքստի հետ և ներկայացվում են վորպես նրա որդանական մասը: Միջին դարերում հաճախ ե պատահում, յերբ վորեւ մեկն անհրաժեշտ ե համարել իր ունեցած ձեռագրում նախկին աշխարհագրական անունները մեկնել իր ժամանակի գործածական անուններով և կամ թե չե նախկին հատվածի այս կամ այն մասը թերի համարելով՝ կատարում է, իր կարծիքով անհրաժեշտ լրացումներ ու այլ տիպի ուղղումներ: Այդ բոլոր դեպքում ել պարզ ե, վոր տվյալ աշխատու-

թյունը փոփոխվում, աղավաղվում ե, վորովհետև նա հեռանում
ե իր նախնական բնագրից:

Ըսդմիջարկություններն ամենից շատ են հանդիպում մեջ պատմագիտական գրականության մեջ: Նրանք շատ քիչ են կրոնական-կանոնական գրականության մեջ: Վերջինիս մեջ փոփոխություններ և կամ լրացումներ կատարելը համարվել ե անթույլատրելի մի գործ: Ըսդմիջարկությունով ամենից շատ աղավաղված տեքստերը—տարեգրություններն են և աշխարհագրությունները: Պարզվում ե, որինակ՝ վոր Սամվել Անեցու անունով հրատարակված ժամանակագրության տեքստի ավելի քան կես մասն իրեն՝ հեղինակինը չի, այլ ուշ շրջանի գրիչների կողմից ավելացված գործ ե: Այդ յերկում ե իրեն՝ Անեցու կենդանության ժամանակ (1176 թ.) ընդորինակված իրեն ժամանակագրությունից, վորը բարեխախտաբար, պահպանվել ե մեր մատենադարանում: Այդ ձեռագրի՝ հրատարակած տեքստի հետ կատարած համեմատության հիման վրա, այժմ հնարավոր ե նշել այն բոլոր հատվածները, վորոնք ուշ շրջանում են ավելացված, ըստ վորում, պարզվում ե, վոր այդ ավելացումները վոչ թե մի, այլ մի շարք գրիչների գործեր են:

Ուշ միջնադարյան հայ մատենագիրների տեքստերում յեղած ընդմիջարկությունները համեմատաբար հեշտ ե ճանաչել, վորովհետև նրանք մեզ հասել են հնագույն ընդորինակություններով կամ ինքնագրերով, բայց գժվար ե հին հայկական մատենագիրների աշխատություններում յեղած ընդմիջարկությունների ճանաչելու հարցը, վորովհետև նրանք մեզ հասել են ուշ շրջանի արտագրություններով: Յերբեմն՝ նման ընդմիջարկությունները վըճռական նշանակություն ունեն այս կամ այն տեքստի հեղինակը պարզելու խնդրում: Վորպես որինակ՝ կարելի յե բերել այստեղ Խորենացուն վեհնագրվող «Աշխարհացոյց»-ի տեքստը: Ուշ շրջանի ընդորինակողներն այդ տեքստում ավելացրել են մի շարք աշխարհագրական նոր անուններ («Ղոփմ», «Յօզո սուսաց», «Շրուան» և այլն), վորոնք թյուրիմացաբար կովան են դարձրել վորոշ անուշադիր բանասերներ՝ Խորենացուն վերնագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի ժամանակը վորոշելու գործում: Ցեքստի վերջուժման հիման վրա անպայման հնարավոր ե պարզել նրա դրվելու ժամանակը, բայց այդ գիտական և հիմնավոր կարող ե լինել այն դեպքում միայն, յերբ նախքան տեքստի վերլուծումը փորձ կարվի ազատել տեքստն ընդմիջարկություններից:

բ) Հապավում:—Հին հայկական ձեռագրերում ըազմաթիվ են նույնպես այս կամ այն հին մատենագրերից առանձին հատվածների հապավման դեպքեր: Դրա պատճառը հիմնականում յերկու յեմեկ, վոր նյութի պակասությունը հնարավորություն չի տալիս ընդորինակել տվյալ մատենագրի վող աշխատությունը և ընդորինակող գրիչը նպատակահարմար ե համարում իր կարծիքով ավելորդ, յերկրորդական արժեք ունեցող մասերը կրծատել, իսկ մյուսը—յերբ տվյալ աշխատության առանձին հատվածները, յերբեմն անգամ գլուխներ խորթ են համարվում տվյալ ժամանակաշրջանի իրավական նորմաներին և պահանջվում ե նրանց համար իրորթ համարված մասերը գուրս հանել: Առաջին գեպքի համար կարելի յե մատնացույց անել Սոկրատի պատմությունը և «Աշխարհացոյց»-ը, վորոնք մեզ հասել են յերկու խմբագրություններով—համառոտ և ընդարձակ, իսկ յերկրորդ գեպքի համար—Շիրակացու «Տիեզերագիտության» տեքստը: Վերջինից, ինչպես պարզվում ե մեր մատենագրարանի մի ձեռագրում պահված «Տիեզերագիտության» նախնական տեքստի ընդորինակությունից, կրծատվել ե մոտ 23 տեղում: Կրծատված են գլխավորապես այն տեղերը, վորոնք համարվել են հակաքրիստոնեական կարելի յե բերել մի որինակ՝

«Արդ ահա հասաք ի կէտն ոչ դուզնագեայ, այլ ի մեծն և յահագին յերկինն վերին, որում Յոյնք եթեր կարդացին, և Քաղդէացիք հուր թաղկեալ ասացին, որում և բազումք յեկեղեցւոյ հաւանեցան: Թէպէտ և չարաց փիլսոփայիցն ոչ թուեցաւ հաճոյ, բայց մեզ աւելորդ է զնոցոցն ճառել լքեալ թողդուք զիսոստեալսն...»:

Անանիայի Շիրակունոյ Մնացորդը բանից, Հրատ. Ք. Պատկանյանի, «Յաղագս երկնի» գլուխը (եջ 35):

«Արդ՝ ահա հասաք ի կէտն ոչ ի դուզնոգեա, այլ ի մեծ և ահագին երկինն վերին, որում յոյնք եթերն կարդացին և հելենացիք հուր թաղկեալ ասացին, զորս և բազումք յեկեղեցոյ հաւանեցան: Թէպէտ և չարաց փիլսոփայցն ոչ թուեցաւ հաճոյ լքանզի կէսքն ի նոցանէ երկինս բազումս և աշխարհս անհամարս ասացին. և կէսք ի նոցանէ ի մի տարր երկնի զերկինս ամենայն ձուլեալ ասացին. և զնիւթյուն ասացին՝ եթէ է այլ իմ բնութիւն պարզ, աւտար ի չուրից բնութեանց, զի ոչ հուր է և ոչ աւդ, ոչ հող և ոչ չուր,

այլ այլ իմն է, ասեն լուսաւոր և
խիստ որպէս զբնութիւն պաղ-
պաղակի և կամ որպէս զվանակն
է ասին՝ եթէ ի ջրոց ոչ
պաղեալ խստանան՝ մեծաւ հաս-
տառուն կցուածով առնու գալ ի
կերպարանս ականց պատուա-
կանաց, և ասեն եթէ վանակն
պայծառ լուսաւորութեան աւ-
դոյ և ջրոց, յորոց առնուն նո-
րա զաւրինակն նիւթոյ հաստա-
տութեանն: Բայց ինձ արդարե
ծաղու և եպերանաց արժանի
թուին, ոքք զանձինս առ իմաս-
տունս ունէին և յիմարեցան:
Ոքք զերկին և զերկիր անսկիզբն
և անկատար ասացին, որպէս ոք
զի տեսանիցէ զիր բոլորակ
դրոշմեալ յումէ և իցէ. և վասն
զի ոչ էր ինքն ի տեղն, յորա-
ժամ հանաւ զիրն բոլորակ. և
չերկի թէ ուստի՞ իցէ սկսեալ և
կարծեցէ թէ անսկիզբն է: Բայց
պարտ է նկատել մտաւք, եթէ
որ էհան զնա, անդրէն արար
նման սկիզբն և նոյն բովանդա-
կեաց զնա կատարմամք: Եւ
արդ՝ աւելորդ է մեզ վասն նո-
ցա յերկրաբաներ լքեալ թող-
ցուքը խոտեալմն...»:

Մեր մատենադարանի թիվ
2180 ձեռագիր, թերթ 481 թ:

Զակերտավոր փակագծի մեջ յեղած ամբողջ հատվածը, ինչ-
պէս տեսնում ենք, Շիրակացու տեքստից կրծառվել ե: Այն ժա-
մանակ, յերբ քրիստոնեական յեկեղեցին Հայաստանում ևս ստեղ-
ծում ե իր անշարժ կրոնական դոգմաները, նա այդ տեսանկյու-
նով վերանայում է հրապարակի վրա յեղած բոլոր տեսակ գրա-

կանությունը: Վորոշ աշխատություններ նա անհրաժեշտ ե հա-
մարում ամբողջապես գուրս հանել, վորոշ աշխատություններից
նա կրծառվում է և վորոշ աշխատություններ հիմնովին հմբագըր-
ման յենթարկում: Շիրակացու աշխատությունները ևս յենթարկ-
վել են այդպիսի վերանայման:

Անհրաժեշտ ե նշել, վոր մեղ հասել են հակաքը հստոնեա-
կան համարված վորոշ գրականության ցուցանիր: Այդպես՝ մեր
մատենադարանի թիվ 1869 ձեռագրում, վորն ընդորինակված ե
Անդրեաս գրչի կողմից 1585 թվականին, բերված ե հետեւյալ
ցուցակը:

«Այս են անուանք .ԺԶ. սուտ գրոցն, որ եկեալ (Են) ի հեր-
ձուածող ասորոցն և ոչ ի յուղղափառ ասորոցն. իմանայք՝ որ է
այս՝ Աղամայ կտակն, ծիռն աւրհութեան, Փիփիեանն, Գորտո-
սակն, Կիրակոսակն, Ղոսիմուն, Պետրոսի տեսին, Դիաթեկն, Աս-
տուածածնին պատմութիւն, Սիբեռուն (ընդգծումն իմն ե:—Ա. Ա.),
Փիւրհոնացիքն, Մանկութիւն տեառն, Լուսավորչին տեսիլքն,
գԱնթագղիլի մատեանան, Գրիգորի և Բարսեղի հարցմունքն,
գՄանեայ մեկնութիւն (ն) աւետարանի: Եւ որ հաւատայ նոցայ
նղովի»:

գ) Գրչական աղավաղումներ:— Այս տիպի աղավաղումների
պատճառը գլխավորապես ընդորինակվող տեքստի վատ ընթերց-
ման և կամ թե չե ընդորինակող գրչի անփութության հետեւան-
քով ե: Հին հայկական տեքստերը, ինչպես ասել ենք արդեն,
բառանջատում չունեն, և, բացի այդ, պատահում ե, վոր ձեռա-
գիրը ջրի մեջ ընկնելով, կամ արկի տակ յերկար մնալով դժվար
ընթեւնելի յեն դառնում: Նման տեքստերն ընդորինակող գրիչը,
պարզ ե, վոր պիտի թույլ տա և տալիս ե, գրչական վորոշ սիստ-
ենիր: Տեքստերում յեղած նման սիստեմը վերջ տալու համար
ընդունված ե կազմել մատենագրերի գիտական, համեմատական
տեքստը՝ տեքստից ներքեւ բերելով այն բոլոր տարբեր ընթեր-
ցումները, վորոնք նկատվում են տարբեր ձեռագրերում: Աղավա-
ղումների այս տեսակն ավելի լավ պատկերացնելու համար ան-
հրաժեշտ ենք համարում բերել մի քանի որինակներ՝

«...ոմանք ասացեն զգմանէ
(այսինքն՝ «յաղագս կաթին
ծրոյ»—Ա. Ա.) թէ ճանապարհ է
է հին, արեգական հետ...»:
(Պատկ. հրատ. հջ 48):

Պիտի լինի «...ոմանք ասա-
ցին զգմանէ թէ՝ ճանապարհ է
դա հին արեգական հետ»:

«...ամեմք՝ թէ ամենայն զգայութիւնքս վերինք և ներքինք ունին խառնուած միաբանութեան առ իրեարս»: (Պատկ. հրատ., էջ 48):

«...ասեմք՝ թէ ամենայն զգացութիւնք վերինք և ներքինք խառնուած միաբանութեան ունին առ իրեարս»:

ՅԵՐԿԱՐՁԻՐ	ԲՈԼՈՐԳԻՐ	ՆՈՎԻՐ
Մ - Մ	Ն - Ն	Ա - Ա
Դ - Դ	Ի - Ի	Բ - Բ
Յ - Յ	Ը - Ը	Ղ - Ղ
Չ - Չ	ԸՆ - ԸՆ	Ճ - Ճ
Ւ - Ւ	ԱՅ - ԱՅ	Շ - Շ
Ի - Ի	Է - Է	Ջ - Ջ
Զ - Զ	ԱՌ - ԱՌ	Ա - Ա
	Կ - Կ	Ֆ - Փ
Է - Է	Թ - Թ	ԻՒ - ԻՒ
Ը - Ը	Ժ - Ժ	Ն - Ն
Ջ - Ջ	Ա - Ա	Հ - Հ
Ո - Ո	Հ - Հ	Ե - Ե
Ք - Ք	Ճ - Ճ	Ռ - Ռ
	Ճ - Ճ	Ն - Ա
(ԺԿԱՆ)		

ՆԿ. 27.

Ընդորինակող գրիչները սխալ են կարդում իրենց արտապահ այս կամ այն տեքստը. նրանց կատարած սխալը մտնում է

ձեռագրի մեջ և նրա որդանական մաս դառնալու քաղաքաց ցիություն և ձեռք բերում: Գրիչների բաց թողած ահա այս սխաները շատ հաճախ հիմք են դառնում վորոշ ուսումնասիրողների մոտ՝ սխալ յեղակացություններ հանելու: Գրչական այս աղավաղումներից աղատվելու համար հայկական մատենագրերից մի քանիսը հրատարակվել և ձեռագրական համեմատություններով (Ազաթանգեղոս, Խորենացի): Սակայն սա դեռ հայկական աղբյուրների գիտական հրատարակության սկիզբն և միայն: Դեռ մեր մյուս աղբյուրները սպասում են հերթի: Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների համար անհրաժեշտություն և ոգտագործել սկզբնաղբյուրները:

Բացի նշված աղավաղումներից, պատահում են ձեռագրերում թերթերի հետևառաջությունից կամ պակասած թերթերի հետևանքով առաջցած աղավաղումներ: Նախնական ձեռագրում թերթերը խառնվում են, կամ թերթերից ընկնում են, իսկ ընդուրինակող գրիչն անուշադրությամբ ձեռագրում յեղած թերթերի հետևաղականությամբ արտագրում ե, չի նշում պակաս թերթերը, վորի պատճառով հետագայում տեքստը աղճատման և յենթարկվում: Ուսումնասիրելիս՝ անհրաժեշտ և սկզբաղբյուրների ամբողջականության վրա լուրջ ուշագրություն դարձնել:

15. ՁԵՌԱԳՐԻ ՍԻԳՆԱՏՈՒՐԱՅԻ ԼՐԱՑՈՒՄԸ

Ձեռագրի ուսումնասիրությամբ զբաղվող յուրաքանչյուր մասնագետ պարտավոր և տալ իր ոգտագործած ձեռագրի նկարագրությունը, կամ ինչպես ընդունված ե ասել, լրացնել ձեռագրի սիգնատուրան: Ձեռագրերի սիգնատուրան լրացվում ե յերկու ձեռք—համառոտ և ընդարձակ:

Ձեռագրի համառոտ նկարագրության ժամանակ նշվում են՝ ձեռագրի համարը, բովանդակությունը, գրիչը, գրչության վայրը, թվականը և գրությունը:

Ձեռագրի ընդարձակ նկարագրության ժամանակ ուսումնասիրողը պարտավոր է մանրամասն պատասխանել հետեւյալ հարցերին:

1) Ձեռագրի համարը:—Նշվում ե վոչ միայն ձեռագրի ներկա նոր համարը, այլև հինը, յեթե հնարկե այդպիսի համար ձեռագրին առաջներում ունեցել ե:

2. Աւերենագիրը:—Գրվում ե ձեռագրում յեղած տվյալ աշխա-

տության վերնագիրը: Յեթե ձեռագրի մեջ մտնում են մի քանի նյութեր, այն դեպքում ձեռագիրը համարվում է ժողովածու և տրվում են նրա մեջ յեղած նյութերի բովանդակությունը (որինակ՝ 1-ա-13-ա-ժամանակագրութիւն Սամուէլի Անեցւոյ, 18-ը-24-ա-Պատմութիւն Կիրակոսի Գանձակեցւոյ, 24-ը-72-ա-Արիստոտելի Պերի Արմենիաս):

3. Թերթեր:— Ձեռագրերը համարակալվում են սովորաբար վոչ թե եջերով, այլ թերթերով: Նկարագրության ժամանակ պիտի տալ թերթերի ընդհանուր քանակը: Վորևէ կապակցությամբ թերթերի առանձին յերեսը ցույց տալու դեպքում՝ առաջին յերեսի համար գրվում է «ա» (կամ լատինական ա), իսկ մյուս յերեսի համար—«ը» (լատինական Վ) տառերը: Այսպես՝ 64-ա (=64-ը թերթի առաջին յերեսը), 64-ը (=64-ը թերթի շուրջ տված յերեսը):

4. Գրակները:— Հնում ձեռագրերը գրվել են վոչ թե կազմված գրքերով, այլ պրակներով, վոր հետո միացվել և կազմվել են՝ հաշվելով տվյալ կազմի մեջ յեղած պրակների քանակը: Անհրաժեշտ են նշել ահա այդ պրակների քանակը:

5. Մեծուրյանը:— Նշվում են ձեռագրի լայնությունը, յերկարությունը և հաստությունը՝ սանտիմետրներով:

6. Նյուրը:— Հայկական ձեռագրերի հիմնական նյութը թուղթ ե կամ մագաղաթ, ըստ վորում, նշվում ե դրանց գույնը: — յենթադրենք՝ դեղին գույնի մագաղաթ, կապտագույն թուղթ և այլն:

7. Կազմը:— Նշվում ե կազմը ինչ նյութից լինելը, — կաշեպատ տախտակ ե, կարտոն ե, հասարակ հաստ թուղթ ե և այլն: Յեթե կազմին կպցրած ե լինում կտոր՝ նշվում են ահա այդ մասին:

8. Պահպանակ:— Պահպանակ կոչվում են ձեռագրի այն թերթերը, վորոնք դրվում են կազմի մեջ՝ ձեռագրի տեքստը պաշտպանելու համար: Ձեռագրերի մեծ մասի մեջ վորաբես պահպանակ գործ են ածված հին ձեռագրերի պատառիկներ: Յեթե պահպանակի վրա կան գրեր, պիտի աշխատել պարզել նրանց ըովանդակությունը և նշել սիզնատուրայում:

9. Ձեռագրի վիճակը:— Պիտի նշել՝ ձեռագրերը բավարար վիճակում են, վնասված են, քայլքայլած են: Յեթե վնասված ե՝ պիտի նշել վնասվածքի չափը և այն մասին թե ձեռագրի վոր մասումն ե վնասվածքը:

10. Գրուրյանը:— Կարձ նշվում ե՝ միասյուն ե, յերկսյուն, թե յեռասյուն ե, վերջինս հաղվարդեալ ե հայկական ձեռագրերում:

11. Դատարկ րդեր:— Յեթե կան ձեռագրերում դատարկ թղթեր՝ նշվում են նրանց համարները:

12. Տողերը:— Թանի տող ե գտնվում ձեռագրի մի եջում: Յեթե եջերում նկատվում են տողերի քանակի տարբերություններ, վերցվում ե նրանց միջին թիվը:

13. Դեռմեջներ:— Յեթե գծումը ձնշումով ե՝ նշվում ե այդ մասին քարտում:

14. Բառանձառում:— Ձեռագրերի տեքստում բառանձառում կատարված ե, թե վոչ: Պիտի կարձ պատասխանել «այս» կամ «վոչ»

15. Գիրը:— Ձեռագրին ինչ գրով ե գրված՝ մեսրոպյան յերկաթագիր ե, միջին մեսրոպյան գիր ե, ըոլորդիր ե, թե նոտր ե:

16. Զարդարություն:— Այստեղ անհրաժեշտ ե տալ ծանոթություն ձեռագրի մանրանկարչական արժեքի մասին—ինչ գույնի թանաքով են գրված վերնագրերը և ինչպիսի զարդարերով (թռչնագրեր, ծաղկագրեր), կմն արդյոք խորաններ և կիսախորաններ և ինչ մանրանկարչական արժեք են ներկայացնում, ինչ շկոլայի յեն վերաբերում և այլն:

17. Գրիչը:— Ով ե գրել ավյալ ձեռագիրը: Յեթե ձեռագրի գրիչները մի քանի հոգի յեն, պիտի հիշել բոլորի անունները: Յեթե ձեռագրին ինքնագիր ե, այսինքն՝ գրված ե աշխատության հեղինակի կողմից, հիշվում ե այդ մասին:

18. Ծաղկող:— Խոսքը ձեռագրի նկարչի մասին ե: Յերբեմն՝ ձեռագրի գրիչը հանդիսանում ե նաև ծաղկողը, վորի մասին պիտի հիշել Պատահում են դեպքեր, յերբ ձեռագրիրը գրելուց մի քանի դար հետո յեն տալիս ձեռագրիրը ծաղկելու (զարդանկարելու), ուստի և անհրաժեշտ են նշել ձեռագրի ծաղկելու ժամանակը:

19. Կազմողը:— Յեթե հիշատակարանից հնարավոր ե դառնում պարզել ձեռագրի կազմելու ժամանակը, պիտի նշել այդ մասին:

20. Նորոգողը:— Ձեռագրի նորոգողները սովորաբար թողնում են իրենց հիշատակագրությունները, վորոնցից պիտի պարզել և նշել նորոգողի անունը և ժամանակը:

21. Սացողը:— Ձեռագրերի մեծ մասը գրվել են առանձին մարդկանց պատվերներով, վորոնք պահանջել են գրիչներից հիշել իրենց անունները ձեռագրի հիշատակարանում:

22. Ժամանակը:— Նշվում ե այն ժամանակը, վորը տալիս ե ձեռագրի ընդորինակող գրիչը: Փակագծում պետք ե տալ նաև մերներկա թվականը: Յեթե ձեռագրիրը գրվել և մի քանի տարվա ընթացքում՝ պիտի նշել այդ տեղողությունը:

23. Տեղբ:— Գրչության վայրը նշելիս՝ պիտի հիշել թե վնր շրջանի, վնր քաղաքում կամ գյուղում և գրվել:

24. Հիշատակարան յեզ հիշատակագրություն:— Նշվում եւ ձեռադրի այն եջերի համարը, ուր գտնվում եւ գրչի հիշատակարանը կամ ուշ շրջանում ձեռագրի եջերի վրա արված հիշատակագրությունները: Ձեռագրի ավելի ընդարձակ բնութագրման ժամանակ արտագրվում են նաև հիշատակարանները և հիշատակագրությունները:

25. Ծանօթություններ յեզ տեղեկություններ:— Այստեղ գլխավորապես տրվում եւ տվյալ ձեռագրի համառոտ պատմությունը—մինչև մատենադարանի ձեռագրերի ժողովածույթի մեջ մտնելը ինչ ինչ մարդկանց մոտ եւ գտնվել, վոր ժամանակներում, նա բանասիրության մեջ հայտնի յեւ թե վոչ և յեթե հայտնի յեւ ինչ չափով, ինչ կապակցությամբ և այլն:

ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. Акад. Н. Я. Марр, Новые археологические данные о постройках типа Ереруйской базилики (З. В. О. XIX).
2. Его же, Надгробный камень из Семиречия (З. В. О. VIII).
3. Акад. В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Москва, 1918 г., стр. 44—50.
4. Акад. И. А. Орбели, Багаванская надпись (см. „Христ. Восток“ Т. II, стр. 138—142).
5. Հ. Տաշիր, Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վեհնա, 1898:
6. Պրոֆ. Հ. Աճառյան, Հայկական գիրը:
7. Իսահակ Յալութիւնեանց, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892թ. (Խրկորութ մասը):
8. Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութիւն, Վեհնեափկ, 1886 («Հայ գրչագիրք» գլուխը):
9. Проф. Шанидзе и И. Абуладзе, О новораскрытом албанском алфавите, Тбилиси, 1898 г.
10. N. Karamantz, Verzeichniss der arm. His. efc., Berlin, 1888.
11. Կ. Ղափաղարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Յերեգան, 1939 թ.

ԲՈՎԱՆԴԻԳՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ներածություն	3
1. Նախամերոպական գրականության հարցը	6
2. Հայկական գրության հնագույն նմուշները	12
3. Հայ գրիչները	18
4. Հայկական գրերի տեսակավորումը	24
5. Յերկաթագիրը և նրա բնորոշ հատկանիշները	26
6. Բոլորգիրը	33
7. Նոտրգիրը և շղագիրը	34
8. Համառոտագրությունները	36
9. Գաղափարագրերը	38
10. Ծածկագրության հիմնական տեսակները	42
11. Թվերի գործածությունը հայկական գրականության մեջ	49
12. Կետագրությունը հայկական ձեռագրերում	52
13. Մանրանկարչությունը	55
14. Փոփոխությունները և աղափաղումները հայկական ձեռագրերի նախնական տեքստերում	59
15. Զեռագրի սիդնատուրայի լրացումը	65
16. Գրականության ցանկը	69



Պատ. Խմբագիր՝ Ա. Ը. Ղարեգիսան
Տեխ. խմբագիր՝ Զ. Մարտիրոսյան
Սրբազրիչ՝ Մ. Հախնազարյան
Կոնտրոլ սրբազրիչ՝ Ս. Բաբայան
Գլուխակ լիազոր Ե 1131, պատ. 267, տիրաժ 1000

Պետհամալսարանի Հրատարակչության տպարան, Յերևան, Աբովյան 104.

ՀՀ Ազգային գրադարան



NL0121600

ԳԻՆԸ Յ ԱՌԵՔՆԻ

705

38